

ՔԵԶ ՉԵՆ ՍԻՐՈՒՄ... ՍԻՐՈՒՄ ԵՆ ՔՈ ԳՈՐԾԸ ԲԱՐԻ ԵԿԱՐ 2012

Տարիներն իրար հետևից թավալվում են ապագան ներկայի ու ներկան անցյալի են վերածում, հիշեցնելով, որ անցյալի վերադարձնելն անհնար է, ուստիս պարտավոր ենք ուշադիր և բաց աչքերով նայել մեր ընթացիկ վայրկյաններին: Նույնն են հաստատում նաև ողջ անցյալ տարվա ընթացքում մեր արձանագրած նվաճումները նաև անկատար, կիսատ կամ անհաջող գործերը:

2011 թվականն արդեն պատմության միացավ, մեկ էջ եւս ավելացնելով մեր պատմության հաստատվող գործին, սակայն տրված խոսքերից եւ խոստումներից դեռ շատերը մնացին խոսքի սահմաններում ու չվերածվեցին գործի, քանզի մեզից ոմանք չգիտակցեցին, կամ չեն ուզում ընդունել և խոստովանել որ ցանկացած գործ իրականացնելու համար խոսքից ու Որոշումից բացի պահանջվում է նաև Կարգ ու Կանոն, Անկեղծություն, Ծրագիր եւ Կամք:

Ահա ժամանակն է հետդարձ ակնարկ նետել 2011թ. մեր ձեռքբերումներին ու կորուստներին: Պահն է անաչառ և սառը դատողությամբ նայելու անհատական, համայնքային, համասփյուռքյան, հայաստանյան եւ արցախյան ու համահայկական իրադարձություններին, որոնք անտարակույս իրենց ազդեցությունն են թողնելու մեր այսօրվա ու ապագայի վրա:

Համայնքային գեոմոնում ճաշակեցինք դպրոցների ու ազգային այլ կառույցների վերադասավորման կամ այսպես ասած «օպտիմալացման» արդյունքները, Նոր Ջուղայի Ար. Ամենափրկիչ վանքի թանգարանի թալանի հետ կապված հարցերն

ու այդ կապակցությամբ ԱՅԹ Թեմական խորհրդի մեղմ ասած անհասկանալի լռությունը, Թեհրանի հայոց «Թունյան» ազգային դպրոցի վերակառուցումն ու դրա ընթացքում առաջացած շինարարական և նյութական հարցերը, ...

Համասփյուռքյան գեոմոնում թեև հատուկ տարրերի զգոնության եւ հետեւողականության շնորհիվ որոշ հաջողություններ արձանագրեցինք Հայոց Ցեղասպանության ճանաչման առնչությամբ, սակայն դեռ եղեռնի 100-ամյակին մոտալուտ այս վերջին տարիներին և մեզանից ոմանք, չեն գիտակցում կամ չեն կարողանում ազատագրվել ինքնական ստրկությունից, չխոչնդոտելու եւ նպաստելու համար ընդհանուր ազգային ծրագիր մշակելու գործին,...

Հայաստանի Հանրապետության միակ ուրախությունը երկի անկախության 20-ամյակի տոնակատարումն էր, քանզի շարունակվում է դատաիրավական համատարած անարդարությունը, կոռուպցիան, տնտեսության մենաշնորհները, գործազրկությունը, հայկական բանակում չդադարող սպանություններն ու ինքնասպանությունները, Սփյուռք-Հայաստան հարաբերությունների ձեւական բնույթը և մանավանդ ազգակործան արտագաղթը ...

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունն էլ ՀՀ փոքրիկ տարբերակը լինելով տառապում է նույն հայաստանյան ախտերով, խոչնդոտում է լրջորեն զբաղվել արդիական հասարակակարգ եւ նրա ապագայի համար կենսական համավոլ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՄԲ, որով միայն պիտի երաշխավորվի նրա

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՇԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐԶԸ ԱՄԱՆՈՐԻ ԱՌԻԹՈՎ

Սիրելի բարեպաշտ հավատացյալ ժողովուրդ:

Տարեմուտի բարի մաղթանքներով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ողջունում և Սեր օրհնությունն ենք բերում ձեզ ի Հայաստան և ի Սփյուռք:

Նոր հույսերով ու ակնկալիքներով դիմավորում ենք 2012 թվականը: Ամանորի սեմին առատացնում ենք նաև մեր աղոթքները՝ սպասելով մեր Տիրոջ Սուրբ Ծննդյան բարի ավետիսին, որը ամեն նոր տարվա հետ լցնում է աշխարհը երկնային շնորհներով և բերում պատգամը խաղաղության և մարդկանց մեջ սիրո ու համերաշխության:

Տիրոջ ողորմությամբ 2011 թվականը խաղաղ տարի եղավ մեր ժողովրդի համար: Պաշտպանված եղան մեր երկրի սահմանները, մեր եկեղեցիներից գոհաբանական աղոթք բարձրացավ երկինք: Հայրենիքում և Սփյուռքում մեր ժողովուրդը ջանաց իր կյանքի բարելավման ու ապահովության համար: Վաղվա լուսավոր օրը կերտելու վստահությամբ դիմագրավեց մեր կյանքում դեռևս առկա դժվարություններին, համբերեց նեղությունների մեջ, ապրեց ու ստեղծեց իր իղձերը մարմնավորելու տեսիլքով ու կամքով և արդար հասարակությամբ ի սփյուռք աշխարհի տոնեց 20-ամյակը վերահաստատված մեր անկախ պետականության: Փառք ենք մատուցում Տիրոջը, որ



օրհնեց մեր երկրի շենացման, ազգային և եկեղեցական մեր կյանքի զորացման համար մեր ժողովրդի ներդրած ջանքերը, հանձնառությունն ու նվիրումը:

Լավատեսության այս ոգով, սիրելի բարեպաշտ ժողովուրդ, դիմավորենք նոր տարին: Մենք ենք 2012 թվականը դարձնելու ձեռքբերումներով և ուրախությամբ լեցուն, մեր խնդիրների վճռման և մեր նպատակների իրագործման օրհնյալ ժամանակ: Քիչ չեն մեր կյանքի հրամայականներն ու անհրաժեշտությունները. յուրաքանչյուրիս ջանք ու նվիրումով, ազգի, եկեղեցու, Հայ- → 2



ՀՐԱՊԱՐԱԿԵՔ ԿԱՆՔԻՑ ԱՆՇԵՏԱՑԱԾ ԻՐԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ ... 1



ՑԵՂԱՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺՆՏՄԱՆ ԲԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ... 3



ԹԵՐ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՊԱՏԱՍԽԱՆԵՑ ՄԱՍՈՒԽ ԿՈՂՄԻՑ ԱՐԵՆՐԾԱԾ ՀԱՐՑԵՐԻՆ ... 12

անվտանգ գոյությունը...

Իսկ ժամանակը չի սպասում և անպայման դեմ է գործում բոլոր նրանց, որ հայրենասիրությունը հասկանում են Արարատի նկարը հեռվում ցույց տալով, բայց չբայելով դեպի Արարատ, գեղեցիկ խոսքեր արտասանելով բայց թաքնում և քողարկված սրիկայաբար միմյան սեփական շահին նայելով:

Քեզ ՉԵՆ ՍԻՐՈՒՄ, ՍԻՐՈՒՄ ԵՆ ՔՈ ԳՈՐԾԸ:
Շնորհավոր Նոր Տարի



Ահմադինեժադ.
«Ոչ մեկն աշխարհում չկա, որպեսզի կարողանա Հայաստանի եւ Իրանի միջեւ քարտեզը փոփոխի»

Ոչ մի բացասական կամ արգելող հանգամանք գոյություն չունի հայ-իրանական հարաբերությունների զարգացման համար: Այս մասին դեկտեմբերի 23-ին, Երեւանում հայտարարել է Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադը՝ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հետ ընդլայնված կազմով համդիպման ժամանակ: Նա իր խոսքում, մասնավորապես, ասել է. «Սեր երկու երկրների հարաբերությունները շատ լավ մակարդակի վրա են: Պատմության ընթացքում մենք միշտ ունեցել ենք լավ հարաբերություններ եւ այսօր դրանք պահպանվում են: Հատկապես Հայաստանի անկախացումից ի վեր այդ հարաբերություններն ամեն օր ընդլայնվել են եւ այսօր էլ շարունակում են ընդլայնվել: Բացի այն, որ մենք ունենք բարիդրացիական հարաբերություններ, որոնք շատ մեծ ու կարեւոր գործոն են, մենք նույն մշակույթի կրողներն ենք: Արդարությունը, մարդկայնությունը, բարեկամությունն այն արժեքներն են, որ երկու բարեկամ ժողովուրդների միջեւ գոյություն ունեն: Երկու ժողովուրդների ավանդույթները եւ սովորույթներն իրենց հերթին ցույց են տալիս փոխադարձ մտերմու-

ՀՐԱՊԱՐԱԿԵՔ ԿԱՆՔԻՑ ԱՆՇԵՏԱՑԱԾ ԻՐԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ ՍՅԹ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆ ՈՒ «ԷՇԻ ՓԱԼԱՆԸ»


Նոր Ջուղայի Ար. Ամենափրկիչ վանքի թանգարանից թալանված սրբապատկերների եւ ազգային ժառանգություն համարվող այլ իրերի պարզան ցայտմ մնում է անհատական նկատմամբ: Թեեւ ըստ ԱՅԹ Թեմական խորհրդի վերջին հաղորդագրության «զողացած գրչագիր մատենաների 5 պատառիկ էջերը եւ երկու նկարչութիւն շրջանակները ... Դեկտեմբերի 27-ին, ... անխափան ու անվնաս կերպով ... վերադարձվել են Առաջնորդարան», բայց դեռ հարցերի հարցը մնացել է անպատասխան՝ ի՞նչ է եղել թալանվածի ամբողջությունը: Արդյո՞ք միայն հենց այդ էր գողացվածը, որ վերադարձվել է արդեն, թե շատ ավելին էր: Ինչո՞ւ ԱՅԹ Թեմական խորհուրդը չի հրապարակում անհետացած իրերի ցուցակը: Ո՞րն է թափանցիկությունից խուսափելու պատճառը:

Ամենայնդեպս, ցավալի է երբ նման կարեւոր հարցեր չեն ստանում կոնկրետ պատասխաններ, կամ-ակամ անվստահություն տարածելով ազգային այդ կառույցի տնօրինության նկատմամբ: Ստորեւ ներկայացնում ենք վերջին շրջանում այդ կապակցությամբ հրապարակված եւ լայն արձագանք գտած լուրերն ու հաղորդագրությունները:

ՀՐԱՊԱՐԱԿԵՔ ԿԱՆՔԻՑ ԱՆՇԵՏԱՑԱԾ ԻՐԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

Լոնդոնի հռչակավոր Sotheby's-ում վաճառվել է 17-րդ դարի հայկական ձեռագիր ավետարան վաճառված ավետարանը Սպահանի Ար. Ամենափրկիչ վանքից թալանված իրերից չէ՞ր

«Արաքս» շաբաթաթերթ, Թեհրան, 14.12.2011: Հռչակավոր «Sotheby's» աճուրդի տանը օրերս վաճառվել է 17-րդ դարի հայկական ձեռագիր ավետարան: Ինչպես հայտնում է



«Սուրբ Թողումն Տիառն մերոյ Յիսուսի Բրիտանոսի», Սարգիս Քիճակ, 1329թ. մագաղաթի վրա, չափեր՝ 16*23 սմ.
«Վերնայտում», (Ռոմանյակ) Կիրակոս Սյունեցի, 1300թ. մագաղաթի վրա, չափեր՝ 16*23 սմ.

աճուրդի տան կայքը, հնարավոր է, որ այն ստեղծվել է 1671 թ-ին: Գրքի նախնական արժեքը տատանվել է 4-6 հազար անգլիական ֆունտ ստեռլինգ, վաճառվել 13.750 ֆունտ ստեռլինգով: Այս մասին տեղեկացնում է «panarmenian.news» կայքէջը: Լրատվության համաձայն մագաղաթյա ձեռագիրը բաղկացած է 271 էջից, որի վրա գրված է սև → 2

ՇՐՈՒՄԱՐԱՐԱԿԵՔ ՎԱՆՔԻՑ ԱՆՇԵՏԱՅԱՑԱԾ ԻՐԵՐԻ ԳՈՒՅԱԿԸ ՍՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆ ՈՒ «ԷՏԻ ՓԱՆԱՆԸ»

1 → քանաքով և «բուրգի» կոչված տառատեսակով: Այն հարուստ է բազմաթիվ զարդանախշերով, պարունակում է թռչունների, կենդանիների և մարդկային ֆիգուրներ: Բնական ներկերի հետ օգտագործվել է նաև ոսկի: 25 x 17.5 սմ չափսի ձեռագրի ստեղծման վայրի, ավետարանչի անվան կամ ծաղկողի մասին կայքը ոչ մի տեղեկություն չի տալիս: Կազմը կարված է կտորից:

Մինչ այս պահը, մեզ անհայտ է թե որտեղից է «Sotheby's» աճուրդի տանը հայտնվել 17-րդ դարի հայկական ձեռագիր ավետարանը: Չենք կարող մեղադրել ոչ Սպահանի հայոց թեմի թեմական խորհուրդին, ոչ էլ այլ կողմի: Սակայն հաստատորեն կարող ենք ասել որ եթե ապագայում հայտնաբերվի, որ հիշյալ ձեռագիր ավետարանը մաս է կազմում Սպահանի Սբ. Ամենափրկիչ վանքի թանգարանից գողացված իրերին, այդ պարագային ՍՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ անդամները, բոլորով հանդերձ, ոչ թե թերացած կլինեն իրենց պարտականություններում, այլ մեղակցած կատարված հանցագործության մեջ. Որովհետև:

Սպահանի ՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴը լինելով ընտրյալ կառույց պատասխանատվություն է կրում Պատգամավորական ժողով ընտրած՝ հայ քաղաքացիների առջև ել պարտավոր էր աշխատել ԹՊՄԱՍՏԻԿ ԵՎ ՕՐԵՆՔԻ ՍԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ, եւ ոչ ինչպես ինքն է հայտարարել «խորհրդապատկեր» հարցերը լուծելու իր որոշման մասին:

Մենք կրկին անգամ Սպահանի ՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴից պահանջում ենք հայտարարությամբ հանդես գալ իր կատարած քայլերի մասին, և թեկուզ հապաղումով իրապարակել վանքից անհետացած իրերի ցուցակը եւ հատակեցնել՝ որ արդյո՞ք «Sotheby's» աճուրդի տնուն հայտնված 17-րդ դարի հայկական ձեռագիր ավետարանը պատկանում է վանքի թանգարանին թե ոչ:


ՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴը տարվա հունիսի 12-ին, Լոնդոնում, երկու հայեր փորձել էին վաճառքի հանել Սպահանի Սբ. Ամենափրկիչ վանքի թանգարանից թալանված 14-րդ եւ 17-րդ դարերին պատկանող հայկական ազգային ժառանգության մատուցներ, Որոնց մասին մինչ այդ որբել տեղեկություն չէր հրապարակել ՍՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴը, իսկ մամուլի արդար հարցումներին ի պատասխան այդ խորհուրդն անընդհատ պնդում էր, թե հարցը հետապնդում է խորհրդապատկերներ: Եվ հակառակ նրան, որ հոկտեմբերի 3-ին, Սպահանում, երեք կանխաձեռնություն են ձեռք բերվել այդ կապակցությամբ ու նույնիսկ ոստիկանության կողմից ազդարարված է «մի շարք գողացած պատկերներ», ցայժմ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴը չի հրապարակել թալանված իրերի ցանկը:

Sotheby's Աճուրդի Կենտրոնում Վաճառված Մատենանք Նոր Ջուղայի Թանգարանի Ցուցանմույշներից Չէ

Այսու յայտնում ենք, որ անմիջապես ստուգել է լրատվամիջոցներում տեղ գտած լրատվությունը, Sotheby's աճուրդի կենտրոնում հայերեն մի ձեռագիր մատենանի վաճառքի մասին, եւ Sotheby's աճուրդի կենտրոնի հրապարակած մի քանի տեղեկությունները նշյալ մատենանի գրչութեան հաւանական թւականի, թերթերի քանակի, գրած տողերի մասին (նշում չի եղել գրչութեան վայրի մասին, իսկ թւականի կապակցությամբ ասւած է հաւանական թւական, չի նշւել մատենանի յիշատակարանի մասին, որը կարելու տեսալ է ստուգումների համար, չկան նաեւ այլ մանրամասնություններ), համեմատելով Ս. Ամենափրկիչ վանքի ձեռագիր մատենաների տեսակների հետ, պարզել ենք, որ վաճառված մատենանի մասին

յայտարարած տեսակներով գրչագիր մատենաներ Նոր Ջուղայի Թանգարանում չկան, հետեւաբար այդ մատենանը չի պատկանում Նոր Ջուղայի թանգարանին:

Սպահանի Յայոց Թեմի Թեմական Խորհուրդ 14 Դեկտեմբեր



«Ավետարանի», Սարգիս Արեղա, 1600թ. քղթի վրա, չափսը՝ 18*25 սմ.
«Ավետարանի», Սարգիս Արեղա, 1600թ. քղթի վրա, չափսը՝ 18*25 սմ.

ՍՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆ ՈՒ «ԷՏԻ ՓԱՆԱՆԸ»

«Արաքս» շաբաթաթերթ, Թեմիան, 05.01.2012: 1978 թվականի վերջին ամիսներին, հեղափոխության հաղթանակից առաջ, երբ մեկը մյուսի հետեւից Իրանում վարչապետ եր փոխվում, ցույցի դուրս եկած ծովածովալ ցուցարարների կողմից հնչեցվող լուրջուզներին մեկը այսպիսի բովանդակություն ուներ՝ «Մենք ասում ենք՝ էլ չենք ուզում, փախնք է փոխվում: Մենք ասում ենք՝ Շահ չենք ուզում, վարչապետն է փոխվում»: Հիմա մեր պատմությունն է. երկար ժամանակ է Սպահանի հայոց թեմի Թեմական Խորհուրդից պահանջում ենք, որ Սբ. Ամենափրկիչ վանքի թանգարանից թալանված իրերի ցանկը իրապարակի, բայց Թեմական Խորհուրդը դրա փոխարեն ժամանակ առ ժամանակ հայտարարությամբ հանդես գալով «վստահեցնում է», որ «յարմար պահին տեղեկ կը պահենք», որ «Սպահանի հայոց թեմի ազգային մարմինները չեն խուսափում պատասխանատվությունից ու վճռական են, որպեսզի վերադարձեն թանգարանից անհետացած պատահիկները եւ բացայայտի յանցագործությունը»:

Վեց ամիս առաջ, երբ մենք եւ մեր գործընկերները հրապարակեցինք Սբ. Ամենափրկիչ վանքի թանգարանից գողացված իրերի մասին լուրը եւ ՍՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴից պահանջեցինք այդ մասին իրազեկ պահել ոստիկանությանն ու տեղեկություն տալ ժողովրդին, սկզբում ասացին թե՛ հարցերը, իսկ ետևում են «խորհրդապատկերներ», հետ դրանից հետո երբ հոկտեմբերի սկզբին նույն հարցով Սպահանում երեք հոգի ձերբակալվեցին եւ նրանցից ազդարարվեց թանգարանային իրեր, էլի թալանվածի մասին հստակ բան չասաց ՍՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴը եւ դարձյալ միայն «վստահեցրեց», որ «միևնույն վճռականություն մ ու հետադարձությունները շարունակելու է իր աշխատանքը, ընդհուպ մինչև յանցագործությունն քննվի ծալքերի բացայայտումը»:

Թեմական Խորհուրդի նման աշխատառճը եւ Լոնդոնի հռչակավոր «Sotheby's» աճուրդի տանը վաճառված 17-րդ դարի հայկական ձեռագիր ավետարանի իրողությունն մեզ

պարտադրեցին եւս մեկ անգամ հանդես գալ հայտարարությամբ՝ «Հրապարակեք Վանքից անհետացած իրերի ցանկը» վերտառությամբ: Սակայն ՍՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴը, դեկտեմբերի 14-ի իր հաղորդագրությամբ, նորեն ճողոպրելով բուն հարցի տակից, միայն «տեղեկացրեց», որ Sotheby's աճուրդի կենտրոնում վաճառված «այդ մատենանը չի պատկանում Նոր Ջուղայի թանգարանին»:

Իսկ ահա դեկտեմբերի 29-ի «շլացուցիչ» հաղորդագրությամբ կարծես թե ամեն ինչը վերջացած համարելով, ուրախությամբ, տեղեկացնում է, որ «Թեմիս ազգային իշխանությունների հետևողական ջանքերի եւ երկրի իրաւապահ մարմինների աշխույժ հետապնդումների շնորհիւ Ս. Ամենափրկիչ վանքի Թանգարանից գողացված գրչագիր մատենաների 5 պատահիկ էջերը եւ երկու նկարչութիւն շրջանակները պաշտօնական մամակագրութիւններից ու գործընթացից յետոյ, թւականիս Դեկտեմբերի 27-ին, իրաւապահ մարմինների կողմից ու ներկայութեամբ Մշակութային ժառանգութեան Կազմակերպութեան Սպահանի գերատեսչութեան պատկան բաժնի ներկայացուցչի, անխափան ու անվնաս կերպով յանձնուել են խորհրդիս լիազօր ներկայացուցչներին եւ վերադարձուել են Առաջնորդարան»:

Եվ այնուհետ ավելացնում՝ «Այս առիթով շնորհաւորում ենք Թեմիս ժողովրդին եւ իրանահայութեանը մշակութային արժեքաւոր գանձերի վերադարձման կապակցութեամբ»:

Մենք եւս մեր հերթին հայտնելով մեր ուրախությունն այս առիթով, կրկին հիշեցնում ենք, որ Թեմական Խորհուրդը լինելով ընտրյալ կառույց պատասխանատվություն է կրում Պատգամավորական ժողով ընտրած՝ հայ քաղաքացիների առջև ել պարտավոր է աշխատել ԹՊՄԱՍՏԻԿ ԵՎ ՕՐԵՆՔԻ ՍԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ, ուստի եւ ՍՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴից պահանջում ենք հայտարարությամբ հանդես գալ իր կատարած բոլոր քայլերի մասին, եւ թեկուզ հապաղումով հրապարակել Վանքից անհետացած իրերի ցուցակը եւ ոչ թե ինչպես ինքն է հայտարարել «խորհրդապատկեր» շարունակի հետեւել հարցերը:

1 → Ոչ մեկն աշխարհում ...
րաստելու համար եւ համարելու այն բոլոր մաքսային եւ այլ լրացուցիչ աշխատանքները, որպեսզի աճեն առեւտրաշրջանառության ծավալները: Անդրադարձանք նաեւ տարածաշրջանային մի քանի այլ խնդիրների: Բարեբախտաբար, մեր տեսակետները՝

տարածաշրջանի խնդիրների հետ կապված, շատ մոտ են եւ նման: Պայմանավորվածություն ձեռք բերվեց, որպեսզի ծրագրերի իրագործման նպատակով երկու երկրների համապատասխան պաշտոնատար անձանց միջեւ հնարավորինս արագ հանդիպումներ կազմակերպվեն»:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՉԸ ԱՄԱՆՈՐԻ ԱՌԻԹՈՎ

բեմիքի և միմյանց հանդեպ մեր սիրով ու պատասխանատվությամբ է պայմանավորված մեր կյանքի խաղաղ զարգացումն ու առաջընթացը: Մեր ամեն քայլում, խոսքում և գործում լինենք միասնական, լինենք արդարամիտ, բարեխիղճ ու զբասիրտ, որպեսզի կարողանանք վերափոխել մեր կյանքը և մեզ ընծեռնված ժամանակը պանծալի ձեռքբերումներով դարձնել գրո արժանի հայոց տարեգրության մեջ:

Իրադարձային է 2012 թվականը: Պետականորեն և համազգային շուրջով նշելու ենք հայ գրատպության 500-ամյա հոբելյանը: Ֆրանսիայի Սենատում քննարկման է դրվելու, և հույս ունենք, որ վավերացվելու է, Ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագիծը: Եկող տարի մեզ սպասում են նաև Ազգային ժողովի ընտրությունները՝ առիթ ամենայն ջանք գործարդելու, որ մեր ժողովուրդը ազատ կամքի արտահայտությամբ առավել զորացնի ամուր հիմքերը հայոց պետականության և իր բարբոր ու շեն կյանքը: Հզոր ու ծաղկուն Հայրենիքը հույսն ու երաշխիքն է մեր լուսավոր գալիքի, ապահովությունը, բարգավաճումն ու բազմապատկումը մեր ընտանիքների, գրա-

վականը հայրենադարձության, գործը կռվանը հայապահպանության, որ Սփյուռքում ապրող հայության սերունդները հարազատության ամուր կապով կապված լինեն Մայր Հայրենիքին և մասնակից հայրենական կյանքին: Լավատեսությունը մեր հոգում, մեր ուժերի հանդեպ վստահությամբ ապրենք, սիրելի ժողովուրդ, և հավատանք, որ մեզ հաջողություններ կպարգևի Տերը, Ով հաղթանակով պսակեց մեր անկախ պետականության վերահաստատումը և օրհնեց մեր պետական, ազգային ու եկեղեցական կյանքի ձեռքբերումները:

Տարեմուտի այս հուսառատ պահին, երբ ընտանյաց անդամներով, ընկերներով, բարեկամներով համախմբված դիմավորում ենք Ամանորը, մեր առաջին աղոթքը վերառաքենք առ Աստված և հայցենք, որ խաղաղություն պարգևի աշխարհին, խաղաղ պահի մեզ Հայրենիքում և Սփյուռքում՝ հավատքով գորավոր, գործով հաղթական: Թող Տիրոջ շնորհներն ու օրհնությունը հեղվեն մեր կյանքին և իր բարեխմամբ առաջնորդությունը լինի մեզ հետ՝ այսպես միշտ:

Շնորհավոր նոր տարի: □

ԹՇՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՉԸ

Պատարժան հմբազրութիւն «Արաքս» շաբաթաթերթի Սօտալուտ Նոր տարւայ եւ մեր Փրկչի՝ Յիսուսի Քրիստոսի Ա. Ծննդեան եւ Աստածայայտութեան բարեբաստիկ տօների առիթով սիրոյ եւ գոհունակութեան ջերմ զգացումներով ողջունում եւ ի սրտէ շնորհաւորում են Ձեզ բոլորդ, մաղթելով որ Բերդեհեմի մտւորում, իր մօր գրկում ժպտացող Աստածորդի մանուկը Ձեր ողջ կեանքը ժպտով, սիրով, խաղաղութեամբ եւ հաճութեամբ լցնի ու պայծառացնի:



Նոր տարին եւ նրա յաջորդող Աստածայայտութեան տօնը սքանչելի առիթներ են յետադարձ ակնարկով տեսնելու անցեալ տարւայ մեր կեանքը իր բոլոր բերքներով եւ մի պահ խորհորդածելու թէ ինչ բաներ արեցինք եւ ինչ բաներ կարող էինք անել ու չարեցինք եւ այնուհետ մտածելու թէ ինչպէս ենք կարող գալիք մեր ժամանակը աւելիով արժեւորել: Անցած ժամանակը գետի հոսող ջրի նման անցաւ. կարելի է հոսող նոյն ջրի երկրորդ անգամ դիպչել. անցած, հոսած ջուրը նորից չի գալ. այնպէս եւ ժամանակը, անցեալը չի վերադառնալ, սակայն կարող ենք ապագայի մասին խորապէս մտածել եւ ներկան որ մեր ձեռքը է այն գործով ու արդիւնաւոր կեանքով արժեւորել:

Անցեալ տարին մեր թեմի համար եղաւ յարաբերաբար ընդունելի եւ որոշ իրագործումներով եւ ինչու չէ՛ նաեւ բաց թողնւմներով յատկանշող մի տարի. մենք արծաթէ դրամի երկու երեսներն էլ մայելու ենք, որպէսզի իրապաշտօրէն դիտարկ մեր կեանքը: Այս օրերին, երբ հաւատով ու սիրով ապրենք կեանքը, վստահաբար այն աւելի իմաստալից կը դառնայ: Հաւատն ու սէրը քրիստոնէական մեր հասակաշրջանները կապած են դաստիարակութեան, այսինքն քրիստոնէական դաստիարակութեան, առնա՞ց որին, մեր կեանքը դատարկ է, ինչ դեր եւ պաշտօն էլ, որ ունենանք:

Աստածային իմաստութեամբ պատահմանաւ կեանքն է աստուծահաճ: Յակոբոս առաքեալը գրում է. «Մինչդէռ երկնային իմաստութիւն ունեցող մարդը նախ մաքրուր է լինում, ապա նաեւ խաղաղարար, ազնիւ, բարեացակամ, ողորմածութեամբ եւ բարի գործերով արդիւնաւոր, անկողմնակալ եւ անկեղծ: Իսկ ով քո շուրջ խաղաղութիւն է սերմանում, նա արդարութիւն է հնձում» (Յկ.3:17-18):

Աստուծորդու հրաշափառ ծնունդը սքանչելի առիթ է մեր կեանքը Նրանով վերանորոգելու. Քրիստոսով վերանորոգած կեանքը սիրոյ, խաղաղութեան և հաճութեան կեանքն է: Հազարաւոր տարիների մարդկային պատմութիւնը վկայում է, որ նա ով ժամանակ կոչւած կտաւ-պատարի

վրայ հետք է թողել, նա համդիսացել է մի աստղ, որ իր լոյսը Քրիստոս-Աստղից առած լուսաւորել է իր շրջապատը: Եականը հոգու պայծառութիւնն է, որովհետեւ հոգու պատուներն են.- Աէր, խաղաղութիւն, ուրախութիւն, համբերասիրութիւն, ազնւութիւն, բարութիւն, հաւատարմութիւն, հեզութիւն, ժուժկալութիւն. Քրիստոսով նորոգւած մարդը իրբեւ նոր արարած մահացնում է իր մարդկային կրթերն ու ցանկութիւնները եւ կերպարանափոխւած ապրում իր կեանքը: Առաքեալի բառերով, Պրբւէ մէկը, որ միացած է Քրիստոսին նոր արարած է. նա այլեւս այն չէ, ինչ որ նախապէս էր, որովհետեւ նա ամբողջութեամբ նորոգւեց (Բ կր 5:17):

Պարագայական նորոգութիւնը, եկեղեցասիրութիւնը մարդս անկուծի են առաջնորդում. եսասիրութիւնն ու եսամոլութիւնը ծնունդ են տալիս կեղծ համեստութեան եւ խոնարհութեան եւ մարդս հեռացնում են Քրիստոսից եւ նրան գեղեցն են առաջնորդում:

Տօնական այս օրերին նորոգենք մենք մեզ եւ առաջնորդենք սուրբ հոգով եւ ոչ մեր մարդկային ցանկութիւններով. մեր տները լցնենք քրիստոս-սէրով. մեր եկեղեցական եւ ազգային կեանքը ջերմացնենք ու պայծառացնենք Աստուծահաճ գործերով եւ այն ժամանակ վստահ եղէք, որ իրեշտակների քաղցրահնչիւն երգը կը լինի մեզ առաջնորդող երգ.- Փա՛ռք Աստծուն՝ բարձունքներում խաղաղութիւն երկրի վրայ

Եւ հաճութիւն՝ մարդկանց միջեւ. Այս խոհերով, մտածունքներով ու զգացումներով շնորհաւորում են Ձեզ սիրելիներ, եւ աստուծային օրհնութիւն են հայցում Ձեր անձնական, ընտանեկան եւ հասարակական կեանքի առաւել պայծառացման ի խնդիր: Շնորհաւոր Նոր տարի եւ Ա. Շնունդ: Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ Ձեզ եւ մեզ մեծ Աւետիս, ամէն: Մնան քրիստոնէական ջերմ սիրով եւ օրհնութեամբ:

ԱՊՕԹԱՐԱՐ՝ ՍԵՊՏՄԻՐ ՍԱՐԳՍՅԱՆ ԱՌԱՋՆՈՐԴ ԹԵՂԵՍԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ 15 Դեկտեմբեր 2011-12-25, Թեմիան

Ցեղասպանությունների ժխտման քրեականացման մասին

Ինքնասպանության տարի-ներին մի խոսք կար՝ դանիական կուտ ուտել, այսինքն կամավորապես ստանձնել ուրիշի համար ձեռնառու դիրքորոշում: Ենթադրյալ, առ այսօր չգիտենք ինչու էր կոչվում հատկապես դանիական: Բայց, որ այսօր որոշ մարդիկ կերել են թուրքական կուտը դա ակնհայտ է: Իսկ ի՞նչ է թուրքական կուտը՝ դա էս արդեն գիտենք, քանի որ Ֆրանսիայի Ազգային ժողովի վերջին քննարկումների առիթով ունանք, մինչևիսկ հայեր, գրում էին և են, որ ցեղասպանությունների հանրային ժխտման քրեականացումը սխալ է, քանզի սահմանափակում է ազատ խոսքը, ինքնուրույն կարծիք ունենալու իրավունքը: Այդ ո՞ր օրվանից հանցագործության պաշտպանությունը դարձավ «խոսքի ազատություն» կամ «կարծիք ունենալ»: Գնացեք, օրինակ, Կանադա և հանրայնորեն «կարծիք արտահայտեք» որ, օրինակ, սևամորթները կամ հայերը փնթի են կամ պարկոտ: Գիտեք չե՞ք ձեզ ինչ կանեն՝ «ատելություն հրահրելու» (hate speech) համար՝ դուք կհայտնվեք բանտում կամ կկրեք այլ պատիժ: Գերմանիայում ասեք, որ Դիտլերը իր պատճառներն ուներ հիտլերների կոտորածի համար: Մի ժխտեք Դիտլերը, այլ պարզապես փորձեք որոշակի արդարացում հիմնավորում բերել դրա համար: Յետևանքները կարծում են ինձանից լավ գիտեք: Բա ու՞ր մնաց «խոսքի ազատությունը»: Թե՞ որոշ մարդիկ կարծում են, որ հայերս ավելի ժողովրդավոր ենք, քան կանադացիք կամ գերմանացիք:

րի»: Շատ պարզ պատճառով, որովհետև հայերի ցեղասպանությունը միակ ցեղասպանությունն է, որը դեռ չարունակվում է, քանի որ սույն

հետևանքները: Հայաստանն այսօր շրջափակելի է դարձել ցեղասպանություն պատճառով, Հայաստանի Հանրապետությանը ցեղասպանության հետևանքով է կորցրել իր տարածքների զգալի մասը՝ հետևաբար կորցրել է գարգացման համար այդքան անհրաժեշտ էլքը դեպի ծով և կենսատարածքը, ինչպես նաև դարձել է ռազմականապես շատ ավելի խոցելի: Հայաստանի Հանրապետության քաղաքացիների զգալի մասն այսօր վատ է ապրում: Դրա համար կան բազում պատճառներ՝ այդ թվում բազմաթիվ ներքին: Բայց էական են, եթե ոչ վճռորոշ, արտաքին պատճառները: Իսկ արտաքին պատճառներից կարևորագույնը հայոց ցեղասպանության մնայուն հետևանքներն են: Յետևաբար, քանի դեռ ցեղասպանության հետևանքները վերացված չեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիները չեն կարող ունենալ ապահով և բարկեցիկ կյանք: Իհարկե լավ կառավարման միջոցով կարելի է հասնել որոշակի բարելավման, սակայն դա կլինի խիստ սահմանափակ, անկայուն և խոցելի: Մնացած տարաբնույթ խոսակցությունները կամ իշխանության գալու խաբեպատիր քարոզ են կամ ազնիվ ինքնախաբեություն: Երկրի հզորությունը, հետևաբար քաղաքացիների բարեկեցությունը, խիստ նյութական հասկացությունը է և այն խարսխվում է նույնքան նյութական հասկացությունների վրա: Իհարկե կառավարման ձևը հույժ կարևոր է, անգամ ունի առօրյա նշանակություն՝ առանց որի հնարավոր չէ բնականաբար կյանքը: Այն մասին է թթխմորի՝ առանց որի չեն կարող որակյալ հանապազօրյա հացը ունենալ: Սակայն եթե չունեն ցորեն կամ այն հողը, որի վրա պիտի աճեցնեն ցորենը՝ թթխմորը դառնում է արագ փչացող ճոխություն:



Կրկնում են, ցեղասպանությունը պատմական երևույթ չէ, որի մասին լինեն տարբեր կարծիքներ, այն հանցագործություն է, իսկ հանցագործությունն ունի միայն մեկ վերաբերմունք՝ դա պատիժն է, իսկ պատժի կիրառման անհնարինության դեպքում՝ դատապարտումը, որոնց նպատակներից է հանցագործության կանխարգելումը:

հանցագործության հետևանքներն ունեն շարունակական բնույթ: Բացարձեք միտքս՝ բոլոր նախորդ ցեղասպանության մեղավորները այս



Հայերի ցեղասպանությունը միակն է, երբ ոչ միայն հանցագործները միջազգայնորեն պատժված կամ զոհն դատապարտված չեն, այլև ցեղասպանությունն ընթացքի մեջ է, քանի որ շարունակվում են ցեղասպանության հետևանքները:

կամ այն կերպ պատժվել են, զոհերը մասնակի կամ ամբողջական հատուցումներ են ստացել և դեռ ստանում են, այսինքն ցեղասպանության հետևանքները որոշակիորեն հաղթահարվել են:

Պետք է հասկանալ, որ հայոց ցեղասպանության ճանաչումը, դատապարտումը կամ ժխտման քրեականացումը Հայոց ցեղասպանության հետևանքների վերացմանը նպատակաուղղած քայլեր են:

մից իրականացված արդարափաստույց գործողությունները չեն կարող դիտարկվել որպես միջազգային, այլ ցեղասպանությունն ընթացքի մեջ է, քանի որ շարունակվում են ցեղասպանության

հետևանքները: Հայաստանն այսօր շրջափակելի է դարձել ցեղասպանություն պատճառով, Հայաստանի Հանրապետությանը ցեղասպանության հետևանքով է կորցրել իր տարածքների զգալի մասը՝ հետևաբար կորցրել է գարգացման համար այդքան անհրաժեշտ էլքը դեպի ծով և կենսատարածքը, ինչպես նաև դարձել է ռազմականապես շատ ավելի խոցելի: Հայաստանի Հանրապետության քաղաքացիների զգալի մասն այսօր վատ է ապրում: Դրա համար կան բազում պատճառներ՝ այդ թվում բազմաթիվ ներքին: Բայց էական են, եթե ոչ վճռորոշ, արտաքին պատճառները: Իսկ արտաքին պատճառներից կարևորագույնը հայոց ցեղասպանության մնայուն հետևանքներն են: Յետևաբար, քանի դեռ ցեղասպանության հետևանքները վերացված չեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիները չեն կարող ունենալ ապահով և բարկեցիկ կյանք: Իհարկե լավ կառավարման միջոցով կարելի է հասնել որոշակի բարելավման, սակայն դա կլինի խիստ սահմանափակ, անկայուն և խոցելի: Մնացած տարաբնույթ խոսակցությունները կամ իշխանության գալու խաբեպատիր քարոզ են կամ ազնիվ ինքնախաբեություն: Երկրի հզորությունը, հետևաբար քաղաքացիների բարեկեցությունը, խիստ նյութական հասկացությունը է և այն խարսխվում է նույնքան նյութական հասկացությունների վրա: Իհարկե կառավարման ձևը հույժ կարևոր է, անգամ ունի առօրյա նշանակություն՝ առանց որի հնարավոր չէ բնականաբար կյանքը: Այն մասին է թթխմորի՝ առանց որի չեն կարող որակյալ հանապազօրյա հացը ունենալ: Սակայն եթե չունեն ցորեն կամ այն հողը, որի վրա պիտի աճեցնեն ցորենը՝ թթխմորը դառնում է արագ փչացող ճոխություն:

Պետք է հասկանալ, որ հայոց ցեղասպանության ճանաչումը, դատապարտումը կամ ժխտման քրեականացումը Հայոց ցեղասպանության հետևանքների վերացմանը նպատակաուղղած քայլեր են: Առավել ևս տվյալ պարագային, երբ Ֆրանսիայում առաջին անգամ փորձ է արվում Հայոց ցեղասպանությունը դնել Դիտլերի հետ նույն հարթության վրա՝ այդտեղից բխող բոլոր իրավական հետևանքներով:

Արա Պապյան,


«Սարկոզին մտադիր է Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնել ողջ Եվրոպայում»

Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին մտադիր է եվրոպական բոլոր երկրներին առաջարկել քրեականացնել Հայոց ցեղասպանության ժխտումը: Թուրքական «Դյուրիյեթ» պարբերականը, վկայակցելով Ֆրանսիայում Թուրքիայի դեսպան Թահսին Բուրջուսուլուի խոսքերը, հաղորդում է, որ Սարկոզին առաջարկել է Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրենքի ընդունման վերաբերյալ ԵՄ անդամ բոլոր երկրների միջև շրջանակային համաձայնագիր ստորագրել:

Պարբերականը հիշեցնում է, որ Եվրամիությունում Գերմանիայի նախագահության ժամանակահատվածում ԵՄ երկրներն արդեն իսկ ռասիզմի, ռասայական խտրականության, օտարախոսության և

«Հայոց ցեղասպանությունը ոչ թե այլ երկրների օրենսդիր մարմինները պետք է ճանաչեն, այլ Թուրքիայի խորհրդարանը»

Հայտնի թուրք գրող, հրատարակիչ, իրավապաշտպան «Բեկզե» հրատարակչատանի տնօրեն, անազատության մեջ գտնվող Ռազմի Զարաբուլուն իր փաստաբանի միջոցով Թուրքիայի Ազգային մեծ ժողովին խնդրագիր է փոխանցել, որում կատույցին կոչ է արել Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի նախաշեմին ճանաչել 20-րդ դարի այդ ոճրագործությունը:



«Չափազանց պարզ է. Օսմանյան պետության ժառանգորդը Թուրքիայի Հանրապետությունն է: 1915թ. ցեղասպանության, դրան հետևած տեղահանության, ճուլման քաղաքականության համար պետք է ներողություն խնդրել: Բարոյականության տեսանկյունից՝ այդ ներողությունը ոչ թե այլ երկրների խորհրդարաններում պետք է խնդրեն, այլ Թուրքիայի խորհրդարանում: Դա մեզ չի նվաստացնի, ընդհակառակն՝ արժանապատիվ ու ուժեղ կարգաձևի: Անատոլիան պետք է օժանդակի սփյուռքի իր զավակներին զրկաբաց ընդունելու գործին»:

Զարաբուլուն հիշեցրել է, որ լրանում է 1915թ. Ցեղասպանության 100-րդ տարելիցը: «1915թ. ցեղասպանության 100-ամյա տարելիցի նախաշեմին Թուրքիայի Հանրապետությունն այդ ծանր, բայց միաժամանակ ազնիվական պարտավորությունը բոլոր քաղաքացիների անունից իր վրա պետք է վերցնի»,-թուրքական լրատվամիջոցների հաղորդմամբ՝ ավաված է նրա խնդրագրում:

Նշենք, որ Զարաբուլուն ձերբակալվել է 2011թ. հոկտեմբերի 27-ին՝ Բրդոստանի բանվորական կուսակցության (PKK) քաղաքային թևը

Հանդիսացող «Բրդոստանի Համայնքների միություն» (KCK) դեմ իրականացված գործողության ժամանակ: Նույն այդ գործի շրջանակում՝ հոկտեմբերի 7-ին Ստամբուլում 90-ից ավելի բուրգ ակտիվիստների հետ ձերբակալվել էր նաև Զարաբուլուի որդին՝ Դենիզ Զարաբուլուն: Նա մեղադրվում է հեղաշրջման փորձ կատարելու և KCK-ին օժանդակելու մեջ:

Զարաբուլուն Թուրքիայում Հայոց ցեղասպանության փաստի ժխտման դեմ պայքարող ամենահայտնի մտավորականներից է: Իր այդ գործունեությունը համարում է հեղաշրջման թուրքական իշխանությունների կողմից պարբերաբար հետապնդվել է ԲՕ 301-րդ հոդվածի հատկանիշներով: Ֆրանց Վերֆելի «Սուսա լեռան 40 օրը» պատմավեպը թարգմանելու և Ստամբուլում իրեն պատկանող «Բեկզե» տպարանում Զարաբուլուն թուրքական իշխանությունների կողմից պարբերաբար հետապնդվել է ԲՕ 301-րդ հոդվածի հատկանիշներով: Զարաբուլուն 301 հոդվածի հատկանիշներով է դատապարտվել էր 6 ամսվա ազատազրկման: Զարաբուլուն 301 հոդվածի հատկանիշներով է դատապարտվել նաև Զորջ Զերջանի՝ Հայոց ցեղասպանությունը նվիրված «Ճշմարտությունը մեզ կազատագրի» գիրքը թուրքերեն տպագրելու համար:

Գերմանիայի Դեսպան «1915 թվականի դեպքերը հայրենի են եղել շար գերմանական սպաների և դիվանագետների»

ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործերով Հայաստանի ազգային Հանձնաժողովի կողմից Հայ աշակերտների հետ Հանդիսման ժամանակ ՀՀ-ում Գերմանիայի դեսպան Հանս-Յոսեֆ Եմիլիո Հայտարարել, որ Գերմանիայում Հայոց ցեղասպանության հարցը քննարկվում է Օսմանյան կայսրության տարածքում Առաջին աշխարհամարտի տարիներին գերմանական սպաների առկայության համատեքստում:

«Այն, ինչ տեղի է ունեղել 1915

թվականին, Հայտնի էր եղել շատ զերմա՞ն և ն ա կ ա ն սպաների և դիվանագետների, որոնք աշխատել են Թուրքիայում:

Այս խնդիրների առկայության պարագայում մենք՝ գերմանացիներս պետք է քննատատաբար մտոենանք Հարցին, քանի որ Համամեղակից ենք եղել՝ չիրազեկելով և չխոչընդոտելով տեղի ունեցածը»,- ասել է Գերմանիայի արտակարգ և լիազոր դեսպանը՝ Նիկոլո, որ նույնիսկ այն ժամանակվա կանցները, իմանալով դեպքերի մասին, Հայտարարել էր, որ Թուրքիան կա և կմնա Գերմանիայի դաշնակիցը:

Դեսպանը նաև շեշտել է, որ հենց գերմանացի ակադեմիկոս Հասարական գործիչ դոկտոր Լեփսիուսի ջանքերով էր բարձրաձայնվում Հայ ժողովրդին Հասած աղետի մասին:

«Ուրախ եմ, որ կա Լեփսիուսի անվան ցեղասպանության թանգարան, որը Համագործակցում է Երևանի Ցեղասպանության թանգարանի հետ», - նշեց գերմանացի դիվանագետը:

Ըստ դեսպանի, պետք է քննադատական մոտեցում զրստերել թե Հայոց ցեղասպանության և թե Հոլոքոստի պարագայում, ինչպես և Ռուսոյի պայի, Կոմբոլայի և միջազգայնորեն ճանաչված այլ ցեղասպանությունների հարցերում:

Ես վերը գրել էի «ցեղասպանությունը, այդ թվում և հատկապես հայերի, զուտ պատմական անցք չէ, անցյալի իրադարձությունն»: Ինչու՞ «հատկապես հայերի»:

Կկառուցվի Իրան-Հայաստան-Վրաստան բարձր լարման հոսանքի գծեր

«Պատրաստվում ենք կառուցել Իրան-Հայաստան 400 կվտ բարձր լարման հոսանքի գծեր և կառուցել Հայաստան-Վրաստան նույն հոսանքազորի շարունակությունը»,- Թբիլիսիում լրագրողների հետ ճեպարկույցում ասաց ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարար Արմեն Մուխիյանը: Նա Հայտնեց, որ ստորագրվել է համապատասխան համաձայնագիրը, ըստ որի՝ 2012-ին կսկսվի հոսանքազորի կառուցումը:



Խոսելով այն մասին, թե ինչ հնարավորություն է տալիս այն Հայաստանին՝ Մուխիյանն ասաց. «Թողունակությունը կավելանա մոտ 3 անգամ: Հնարավորություն է տալիս մեզ երկու մեր համակարգերը աշխատացնել զուգահեռ ունենալով: Այս մասով մեծ աշխատանք է կատարված»:

Մյուս խնդրը, որը քննարկվել է վրացի գործընկերների հետ, ըստ Մուխիյանի, կապված է հետազոտության հետ:

սիսայանի, ձմռան շրջանում գազի կայուն ներկրումն է Հայաստան: «Պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ այնպիսի վերահսկողություն սահմանվի, որ գազի մատակարարման խափանում չլինի ձմռան ամիսներին»,- ասաց նա:

Եվրոպա դուրս գալու ակնկալիքով

Իրանի, Հայաստանի ու Վրաստանի միջև էլեկտրաէներգիայի փոխանակման ծավալները մեծացնելու հարցով Իրանի էներգետիկայի փոխնախարար Մոհամադ Բեհզադը Իրանական «Մեհր» գործակալությանը տված հարցազրույցում ասաց, չուսուով կկառուցվի էլեկտրահաղորդիչ նոր գիծ: Ըստ Բեհզադի, 400 կվտ հզորությամբ էՀԳ-ն եվրոպական երկրների հետ էլեկտրաէներգիայի փոխանակման համար նոր տարանցիկ երթուղի կհանդիսանա:

Բեհզադը մասնավորեցրել է, որ նոր էՀԳ-ն կկառուցվի Հայաստանի տարածքով՝ Վրաստանով Եվրոպա դուրս գալու ակնկալիքով: Ներկայումս Իրանի ու Հայաստանի միջև գործում է 230 կվՎ լարման էՀԳ-ն, ենթադրվում է, որ նոր էՀԳ-ն թույլ կտա Իրանից էլեկտրաէներգիա արտահանել Վրաստան Հայաստանի տարածքով:

Ալժերիայի վարչապետը զգուշացրել է Էրդողանին.

Մի չարաչառի՞ք մեր ժողովրդի արյունը

«Հայաստանն լրատու ցանց, Ալժեր, 08.01.2012: Իրանական «Ալ-Ալեմ» լրատվական կենտրոնը, Ալժերից տեղեկացնում է, որ «Ալժերիայի վարչապետ ԱՀՄեդ Օյաջանը շաբաթ՝ հունվարի 7-ին, մամուլի կոնֆերանսի ժամանակ, խոսքն ուղղելով Թուրքիայի վարչապետ Ռեջեօ Թայիփ Էրդողանին, ասել է. «Մեր թուրք գործընկերներին խորհուրդ եմ տալիս, որ մեր արյունը առևտրի առարկա չդարձնեն»:



«Յուրաքանչյուր կողմ իր շահերը պաշտպանելու գործում ազատ է, սակայն ոչ ոք իրավունք չունի չարաչառել Ալժերիայի ժողովրդի արյունը»,- հավելել է նա:

Ալժերիայի վարչապետը նշել է, որ «Թուրքիան 1830թ. Ալժերիան զբաղեցրեց երեք օր անց այն հրամցրեց Ֆրանսացիներին և այնուհետ մինչև Ալժերիայի անկախությունը՝ 1962 թվականը, ՄԱԿ-ում քննարկման դրված Ալժերիայի շահերը պաշտպանող բոլոր բնաձեւերին դեմ է քվեարկել»:

Ալժերիայի Ազգային դեմոկրատական կուսակցության առաջնորդ ԱՀՄեդ Օյաջանը նաև հավելել է. «Թուրքիան ինչ-որ կերպ Ֆրանսիայի կողմից Ալժերիայում կատարված բոլոր սպանություններում դեր է ունեցել: Թուրքիան ՆԱՏՕ-ի անդամ է, և Ֆրանսիան նույն կազմակերպության զինամթերքով է կռվել Ալժերիայի ժողովրդի դեմ, այժերացիները սպանվել են Թուրքիայի արտադրած փամփուշտներով»:

Վել են Թուրքիայի արտադրած փամփուշտներով»:

Հիշեցնենք, Թուրքիայի վարչապետ Ռեջեօ Թայիփ Էրդողանը Ֆրանսիայի Ազգային ժողովում հայոց ցեղասպանության հերքման քրեականացման հաստատման դեմ որպես հակադրեցություն Ֆրանսիային մեղադրել էր Ալժերիայի ժողովրդի նկատմամբ ցեղասպանություն գործադրելու մեջ: Էրդողանը ասել էր, որ «այժերացիների 15 տոկոսը 1945-1962 թթ. սպանվել են ֆրանսացիների կողմից և դա ինքնին ցեղասպանություն է»:

Այս մասին լրատվություն են կատարել «AFP» Ֆրանսական լրատու գործակալությունը, Թուրքիայի, Իրանի և Միջին Արևելյան լրատվական կենտրոնները: Թուրքիայում այս կապակցությամբ սպասվում է հակադրեցություններ:

ԸՇ-ում ԻԻԸ նախկին դեսպան.


Իրանը Ադրբեջանի կատարած արարքներն անպատասխան չի թողնի

Panorama.am, 19-12-2011- «Իրանի Իսլամական Հանրապետությունն Ադրբեջանի կատարած արարքներն անպատասխան չի թողնի»:

Այդ մասին Իրանական «արան-յուզ-իտ» կայքի հաղորդմամբ՝ Իրանի Հեռուստատեսությունը տված հարցազրույցում նշել է ՀՀ-ում ԻԻԸ նախկին դեսպան, Կովկասի հարցերով փորձագետ Մոհամադ Ֆարհադ Բուլեյին:

Քոլեյինն, պատասխանելով ԻԻԸ Հեռուստատեսության հարցին՝ Բաբվի բաժանմունքի տնօրենի՝ ղեկավարների Ադրբեջանից վտարման վերաբերյալ հարցին, նշել է. «Երբ ադրբեջանցի բարձրաստիճան պաշտոնյայի՝ Թեհրանի կատարած այցից հետո նման միջադեպ է գրանցվում, վկայում է այն մասին, որ Բաբվում ի վիճակի չեն կառավարել իրավիճակը»:

«Իրանցի պաշտոնյայի վտարման փաստը բացասական ազդեցություն կունենա Իրան-ադրբեջանական կապերի վրա: Իմ կարծիքով, Իրանի Իսլամական Հանրապետությունն Ադրբեջանի կատարած այդ քայլի նկատմամբ անտարբեր չի մնա»,- հավելել է Մոհամադ Ֆարհադ Բուլեյին:



Հիշեցնենք, որ Ադրբեջանի նախագահի աշխատակազմի հասարակական-քաղաքական բաժնի ղեկավար Ալի Հասանովի՝ Թեհրանի կատարած այցից օրեր անց՝ ղեկավարի 9-ին, Իրանի Հեռուստատեսությունը հայտարարեց, որ Բաբվում ի վիճակի չեն կառավարել իրավիճակը»:

Միջադեպի առնչությամբ՝ ԻԻԸ ԱԳՆ

Թուրքիայի քրդական կուսակցությունը շնորհավորել է հայերին

Թուրքիայի խորհրդարանի միակ քրդական «Խաղաղություն և ժողովրդավարություն» (BDP) կուսակցությունը Սուրբ Ծնունդի կապակցությամբ շնորհավորել է Հայերին:



Թ ու ռ ք ա կ ա ն Haber50 կայքի փոխանցմամբ՝ քրդական կուսակցությունը հրապարակած ուղերձով է շնորհավորել Հայերին Սուրբ Ծնունդի կապակցությամբ՝ մաղթելով, որ տոներն աշխարհում խաղաղություն, եղբայրություն և համերաշխություն բերեն:

Հայաստանի երեխաների 41.4 տոկոսն աղքատ է

Հայաստանյան երեխաների 3.7 տոկոսը ծայրահեղ աղքատ է, իսկ ընդհանուր առմամբ մանկական աղքատությունը 41.4 տոկոս է: Ինչ վերաբերում է ընդհանուր բնակչության աղքատությանը, ապա այն 35.8 տոկոս է:



Այս մասին երեխաների իրավունքների պաշտպանության խնդիրներին նվիրված խորհրդարանական լուսամտերի ժամանակ հայտարարեց ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական աջակցության վարչության պետ Ասողիկ Մինասյանը:

Ներկայացնելով աղքատության խնդիրը պետական աջակցության տեսանկյունից, վարչության պետը նշեց, որ ընտանեկան նպաստի հասցեակալության հարցը շարունակում է մնալ օրակարգային, այն է՝ ինչպե՞ս անել, որպեսզի նպաստները հասնեն հենց աղքատ ընտանիքներին:

Ըստ Ա.Մինասյանի, վերջին տարիներին տեղի է ունեցել գործիքակազմի փոփոխություն, բայց դեռ խնդիրներ կան:

մամուլ խոսնակ Թամին Մեհմանդարյանը, հանդես գալով Հայտարարությունում, նշել է. «Մենք զարմացած ենք, որ Ադրբեջանի նախագահի աշխատակազմի հասարակական-քաղաքական բաժնի ղեկավար Ալի Հասանովի՝ իրանյան այցից կարճ ժամանակ անց նման անհարմար միջադեպ է տեղի ունենում: Հուսով եմ, որ Բաբվում կփոխհատուցի և որքան հնարավոր է շուտ կուղղի իրանցի պաշտոնյայի հանդեպ կատարված անհիմն քայլը»:

Իրանը Հայաստանի էներգետիկայում 571 մլն դոլար կներդնի

Իրանի մասնավոր հատվածի կոնսորցիումը 571 մլն դոլար կներդնի Հայաստանում երկրների միջև էլեկտրահաղորդման գծի անցկացման երկու ծրագրերում: Այս մասին տեղեկացնում է «Iran Daily»-ն: Ներդրումները Արաբա գետի հիդրոէլեկտրակայանի հզորությունը կհասնեն տարեկան մինչև 1,7 գիգավատ:

մել այն ապրանքների ցուցակը, որոնք երկու երկրների միջև կփոխանակվեն ամենացածր սակարկելով, հարողում է «Press TV»-ն:



Արտաքին գործերի նախարարն ավելացրել է, որ երկու երկրները բավարարված չեն ապրանքաշրջանառությունների մակարդակով, և ցանկալի կլինի միջոցներ ձեռնարկել միջսահմանային գործարքները խթանելու համար:

«Երկու երկրների կարծիքով՝ գոյություն ունեցող առևտրային հարաբերությունները, գործարքները կարող են անել տարեկան մինչև 1,5 միլիարդի», - ասել է նա:

Սալեհին նաև նշել է, որ Հայաստանը Իրանի համար կարևոր հարևան է:

ԱՄՆ Ներկայացուցիչների պալատն ընդունել է Թուրքիայի կողմից հայկական եկեղեցիները վերադարձնելու մասին բանաձևը

Դեկտեմբերի 13-ին ԱՄՆ Ներկայացուցիչների պալատում քվեարկության է դրվել և ընդունվել է թիվ 306 բանաձևը: Այն Թուրքիային հարկադրում է հարգել կրոնն ազատ կերպով դավանելու քրիստոնյաների իրավունքը, ինչպես նաև ազգային փորձառնություններին՝ Հայերին, ասորիներին, հույներին և այլ քրիստոնյա համայնքներին վերադարձնել բռնագրավված եկեղեցիները:

Քրիստոնեական բռնագրավված եկեղեցիները իրենց օրինական տերերին վերադարձնելու և քրիստոնյա փոքրամասնությունների նկատմամբ կիրառվող ճնշումները դադարեցնելու մասին Թուրքիային ուղղված կոչը ԱՄՆ Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովը ձայների 43 կողմ, 1 դեմ հարաբերակցությամբ ընդունել էր այս տարվա հուլիսին:

4 → «Թուրք գործակալներն են այրել...»

Պետական գաղտնի միջոցների հաշվից օգտագործվել է նաև Ադրբեջանում ձախողված հեղաշրջման կազմակերպված և քուրդ ապստամբների հետապնդումների և սպանությունների համար»,- ասել է Յըմսալը:

Հիշեցնենք, որ Հունաստանի անտանները 1995-1997թ. 12 անգամ

ավելի շատ են այրվել այլ տարիների համեմատ:

Հունաստանի խորհրդարանական բոլոր կուսակցությունները դատապարտող հայտարարություններ են հրապարակել այս առնչությամբ, իսկ կառավարությունը պաշտոնական բողոք է ներկայացրել Անկարային և բացատրություն պահանջել:

Ջեմիլ Չիչեք. «ASALA-ն և PKK-ն սերտորեն կապված են միմյանց»


«1.in.am»- Թուրքական Milliyet թերթի փոխանցմամբ՝ Թուրքիայի Ազգային ժողովի նախագահ Ջեմիլ Չիչեքը թուրքական TV-8 հեռուստաալիքի եթերում հայտարարել է, որ կապ է տեսնում ASALA-ի (Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակ) և Թուրքիայում ահաբեկչական հռչակված ու արգելված Քրդստանի աշխատավորական կուսակցության (PKK) միջև. «Առաջիկա տարիներին պաշտոնական ԱՄՆ կարող է լրջորեն զբաղվի Հայոց ցեղասպանության ու «ահաբեկչության» խնդիրներով:

Թուրքիան մոռացել է. եթե հարցնենք, թե ովքեր էին շեհիդ (նահատակ) դարձած այն երեք արտագործաշխատողները, ապա ի հայտ կգան դժվարություններ: Ո՞վ է սպանել նրանց:

Հայոց ցեղասպանության հերքումը քրեականացնող օրինագիծը Փարիզում ընդունվեց հենց այն օրը, երբ ASALA-ն սպանել էր զբոսաշրջային հարցերով մեր հյուպատոսին: Այդ պահում ես հանդիսանում եմ ASALA-ի

գործողություններից մերձավոր կորցրած անձ. ASALA-ն սպանել է Լիսաբոնում դեսպանատանն աշխատող իմ ազգակցին: Որպեսզի դա չմոռացվի, ես Յոզգաթի նահանգապետին ու քաղաքապետին առաջարկեցի փողոցներից կամ դպրոցներից մեկն անվանել նրա պատվին, սակայն նրանք չարձագանքեցին:

Մի քանի օրվա ընթացքում «սկսել է» ASALA-ն, իսկ այժմ այն «շարունակում է» PKK-ն: Նրանք «սերտորեն կապված են միմյանց հետ: Առաջիկա տարիներին Թուրքիայի համար Հայոց ցեղասպանության ճանաչումը և «ահաբեկչության» դեմ պայքարը հանդիսանալու են երկվորյակ հարցեր: Մենք պետք է ուշադիր լինենք»:



«Շայերի դեմ պատերազմներ պատերազմը չէ»

«REGNUM» լրատվական գործակալությունը տարածել է հայտարարության մի տեքստ, որն ընդունվել է, ինչպես փաստաթղթի հեղինակներն իրենք են ներկայացրել, «Ադրբեջանի բնիկ ժողովուրդների մի շարք հասարակական կազմակերպությունների և առաջնորդների կողմից ուղղված հանրապետությունում իրենց ազգակիցներին»: Փաստաթուղթը հրապարակվում է թարգմանաբար՝ առանց բնագրի փոփոխության:

«Ադրբեջանի բնիկ ժողովուրդների հասարակական կազմակերպությունների և առաջնորդների դիմումը հանրապետությունում ապրող ազգակիցներին»

«Մեր բանկազին եղբայրներ ու որդիներ,

Ահա արդեն ավելի քան 20 տարի է, ինչ Ադրբեջանի ղեկավարությունը մեր ժողովուրդներին ստիպում է պատերազմել Արցախ-Ղարաբաղի հայերի հետ: Հավանաբար, դա ամենամեծ անարդարությունն է, որին Ադրբեջանի բնիկ ժողովուրդներն ակամա մասնակցում են: Արդեն քսան տարուց ավելի է մեր պատանիներն իրենց ջախել կյանքն են վտանգում և զոհվում հանուն ադրբեջանցիների շահերի: Ձոհվում են իրենք, սպանում մեր դարավոր հարևաններին՝ հայերին: Եվ այդ ամենն այն բանի համար, որպեսզի ամրապնդել Բաքվի իշխանությունը մեր հայրենիքում:

Աշխարհում ոչ ոք չի կարող մեզ բացատրել, թե ինչու լեզգիները, թալիշները, ավարները, ցուխուրները, ուղիները, ռուբուլները պետք է կրվեն հայկական լեռներում: Բացումն ստան է, թե մենք պետք է հայրենիքը պաշտպանենք թշնամուց: Բայց մի-թե՞ Ղարաբաղը մեր հայրենիքն է հանդիսանում: Եվ միթե՞ հայերը մեր թշնամիներն են հանդիսանում:

Երբ 20 տարի առաջ Ադրբեջանական հանրապետությունը հռչակեց իր անկախությունը ևՄԱՄ-ից, նա մեզմից տարածաշրջանի բնիկ բնակիչներից չի հարցրել՝ մենք համաձայն ենք արդյոք այդ որոշման հետ: Այդ կամայականության արդյունքում մենք դարձել ենք սահմանով կիսաված ժողովուրդներ: Այսօր մեզ՝ ռուբուլներին, ցախուրներին, ավարներին, լեզգիներին... ուզում են ստիպել պատերազմել մեկ էլ այն բանի համար, որպեսզի մեզ բաժանող սահմաններն ամրապնդվեն ի շահ գոյություն ունեցող ասիմիլացնող ռեժիմի վերջնական հաստատումին:

Ամբողջ աշխարհը գիտե, թե Ղարաբաղում ապրող ադրբեջանցիներն ու քրդերը 1988-1994 թվականների պատերազմի ժամանակ ինչպես էին վախկոտորեն փախչում հայ զինվորներից: Իսկ մեր հազարավոր տղամեր այդ ժամանակ իրենց երիտասարդ գլուխներն են վայր դրել Ղարաբաղում, ինչն օգնել է Ալիևներին իրենց իշխանությունն ամրապնդել Ադրբեջանում: Այսօր Ալիևները մեր հողերը բնակեցնում են Լեռնային Ղարաբաղից փախած ադրբեջանցիներով ու քրդերով, իսկ մեր տները, Ադրբեջանից արտաքսում մեր ազգակիցներին: Մեր հողը, մեր բազմա-հազարամյա հնամենի հայրենիքը բնակեցվում է Նախիջևանից ու Վրաստանից եկած ադրբեջանցիներով, և դրանում, որքան էլ դառն լինի խոստովանելը, մեր հսկայական մեղքը կա:

Ադրբեջանական հանրապետությունը հսկայական միջոցներ է հատկացնում բանակին, և կարելի է չկասկածել. վաղ թե ուշ այդ բանակը կշրջվի մեր դեմ՝ բնիկ, անդրեմածին բնակիչներին դեմ: Բաքվի հանցավոր կառավարության կարծիքով, որ մեր հայրենիքի թյուրքացման խնդիրն է կատարում, մենք իրավունք չունենք սովորել ու խոսել մեր մայրենի լեզվով, իրավունք չունենք մեր երգերը երգել, գովերգել մեր ազգային հերոսներին:

Մեզմից իսկում են մեր պատմությունը: Մեզմից իսկում են լեզուն: Մեզմից իսկում են մշակույթը: Եվ ամենաբարձրալ Ալլահի կողմից արգելված այդ արարքում մենք ինքներս մեր լռու-

թյամբ ու անգործությամբ, օգնում ենք թշնամուն:

Այո, մենք պատահականորեն չենք Ադրբեջանական հանրապետության կառավարությանը թշնամի անվանում: Միայն թշնամին կարող է ժողովրդի հետ վարվել այնպես, ինչպես դա արվում է Ադրբեջանում: Միայն թշնամին կարող է ժողովրդին արգելել սովորել մայրենի լեզուն, զարգացնել ազգային մշակույթը: Միայն թշնամին կարող է ձգտել ասիմիլացիայի ենթարկել ազգերի, հողը խել մեր ժողովրդից, որն այնտեղ ապրում է հազարամյակներ ի վեր: Միայն թշնամին կարող է մեզ դուրս մղել մեր հայրենիքից և մեր տներում եկվոր ադրբեջանցիներ բնակեցնել:

Մեր բանկազին որդիներ ու եղբայրներ,

Մենք պատասխանատու կերպով հայտարարում ենք, որ հայ ժողովրդի թշնամիներ չենք հանդիսանում: Մենք մանապես պատասխանատու կերպով հայտարարում ենք, որ հայ ժողովրդին մեր թշնամին չենք համարում: Հայերի և մեր ժողովուրդների պատմությունը միահյուսվել է մեր օրինյալ հողում, խոր արմատներ ձգել հողում, և մենք իրավունք չունենք մեր ընդհանուր թշնամիներին թույլ տալ թշնամանք և ատելություն բորբոքել մեր միջև: Մենք ձեզ բոլորիդ կոչ ենք անում վճռակառույց հրաժարվել Լեռնային Ղարաբաղի հանրապետության հետ սահմանում Ադրբեջանի զինված ուժերում ծառայելուց: Մենք դեմ չենք բանակում ծառայելուն, բայց մենք կտրականապես դեմ ենք հայերի վրա կրակելուն: Մեր պատանիները պետք է բանակում ծառայեն միայն մեր պատանական հայրենիքի տարածքում: Լեզգիները Լեզգիստանում, թալիշները՝ Թալիշում, ավարներն ու ցախուրները՝ Ջարեում ... Մենք պատրաստ ենք մեր հայրենիքը պաշտպանել ցանկացած թշնամուց, որքան էլ հզոր ու բազմաբանակ մազունվի, բայց մենք չենք ցանկանում ձգտել Ղարաբաղը նվաճել նրանց համար, ովքեր մեզ ոչնչացնում են մեր պատմական ժառանգության և անցյալի հետ միասին:

Դա մեր արդար դիրքորոշումն է Բաքվի և Ստեփանակերտի միջև հակամարտության նկատմամբ: Դա մեր պատերազմը չէ, և մեր տղաները, մեր ապագան չպետք է տուժեն նրանում: Եթե Ադրբեջանին հաջողվի հաղթել Լեռնային Ղարաբաղի հայերին, ապա հաջորդ թիրախը ուրիշինը նվաճելու ճանապարհին անխուսափելիորեն մենք լիքին ենք թալիշները, ավարները, լեզգիները, ուղիները, ցախուրները... Ադրբեջանն անպայման կօգտվի հայերի հետ պատերազմի փորձից, որպեսզի վաղը մեր ձեռքով ու մեր որդիների ձեռքով ճնշի մեր իսկ ժողովուրդների շարժումը դեպի ազատություն: Եվ այն ժամանակ հավիտյան կզրկվենք մեր պատմական հայրենիքում ինքնիրավ իշխանություն ունենալու հույսից:

Մեր բանկազին որդիներ ու եղբայրներ,

Մենք և դուք պարտավոր ենք հասկանալ. այսօր Ադրբեջանին օգնելով պատերազմել մեզ բարեկամ հայերի դեմ, մենք Ադրբեջանի համար հնարավորություն ենք ստեղծում ճնշելու ազատության մեր բնական ձգտումը: Պետք չէ վախենալ այս արդարացի որոշման նկատմամբ Ադրբեջանի կառավարության վերաբերմունքից: Եթե մեր տղաների գոնե կեսը կամ երրորդ մասն ընդունի այս որոշումը, նրանք անգոր կլինեն մեր առաջ: Բաքվում լավ հայտնի է, որ հանրա-

պետությունում բնիկ ժողովուրդների ներկայացուցիչները շատ ավելի են, քան ադրբեջանցիները: Ժողովրդի ուժի դեմ ոչ ոք ոչինչ անել չի կարող: Բաքվում պետք է հասկանան. մեր պահանջը Ադրբեջանի կառավարությանը պատերազմ հայտարարել չի հանդիսանում, մեր պահանջը բխում է մեր հարևանների հետ հաշտ ու խաղաղ ապրելու մարդկային հասարակ ցանկությունից:

Մենք խաղաղ հարավային Կովկասի կողմնակից ենք: Մենք քվեարկում ենք խաղաղության օգտին: Մենք ցանկանում ենք դեպի ապագան գնալ գլուխներս բարձր պահած, որ հրաժարվել ենք մեր մերձավորների արյունը հեղել: Եվ եթե ինչ-որ մեկին դուր չգա մեր որոշումը, ապա դա արդեն մեր հիմնախնդիրը չէ:



Եղբայրներ և քույրեր,

Մի՞ թողնեք ձեր որդիներին ծառայել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հետ սահմանում: Մենք պարտավոր ենք սկիզբ դնել Կովկասի բոլոր ժողովուրդների համար խաղաղ կյանքին և դատապարտել Ադրբեջանական հանրապետության ղեկավարության նոր պատերազմի անպատասխանատու կոչերը:

Մենք կարող ենք Կովկասի բոլոր ժողովուրդների համար խաղաղ կյանքի սկիզբը դնել: Սա եզակի իրադրություն է. եթե մենք այդ որոշումն ընդունենք և այն կյանքի կոչենք, պատերազմի սպառնալիքը կվերանա, քանի որ ադրբեջանցիները երբեք չեն համարձակվի ինքնուրույն կերպով վերսկսել պատերազմը: Ադրբեջանական հանրապետության բնիկ ժողովուրդները ռազմաբաղաբական լուրջ գործոն են հանդիսանում: Խաղաղությունը հարավային Կովկասում մեզմից է կախված: Մեր հազար-հազարավոր պատանիների կյանքը մեր վճռակառույցով է կախված:

Մենք ձեզ կոչ ենք անում խորհել ապագայի մասին, մեր երեխաների և մեր հայրենիքի ապագայի մասին: Ադրբեջանի կառավարությանն ու ողջ աշխարհին ցուցադրենք, որ մենք դեմ ենք պատերազմին: Փրկենք մեր որդիների կյանքը»:

Դիմումը, որը բաց է բոլոր կազմակերպությունների և առանձին մարդկանց համար, ստորագրել են.

Ավարական Ջամախաթների միություն՝ Սագոմեդով Մուսլիմ Սայիդովիչ (mogamedov.muslim@inbox.ru),

Չուպանով Սագոմեդ Միմեդովիչ (chupanilav@mail.ru),

Օմարով Հազրի Մախաբովիչ (hizzi.omazov@mail.ru),

Սագոմեդով Շամիլ Միքայիլովիչ (mogomedor -76@bk.ru):

Լեզգի ժողովրդի համաշխարհային կոնգրեսի նախագահ՝ Սագոմեդով Սագոմեդ Աբուխանովիչ (zryh-57@mail.ru):

Լեզգի սպաների համառուսաստանյան միության նախագահ՝ Սագոմեդով Սագոմեդ Օմարովիչ (Lion1947@mail.ru):

Լեզգի երիտասարդության համառուսաստանյան միության նախագահ՝ Աբդուլլահե Էմվեր Ինայթովիչ (chirvan 8@gmail.com):

Ռուբուլ գրող, հրապարակախոս՝ Ֆազիլ Դաշլայ (dachlay@mail.ru):

Իրանի ռադիոյի թալիշական խմբագրության տնօրեն՝ Յասեր Քարամզադեհ

ԵՅՀ պատասխան համերաշխություն-հայտարարությունը

Ադրբեջանի բնիկ փոքրամասնությունների ղեկավարների հայտարարությանը



դարյան հողը, տունը եւ ընտանիքը:

Եվրոպայի Հայերի Համագումարը (ԵՅՀ) իր գոհունակությունն ու հիացմունքն է հայտնում Ձեզ՝ Ադրբեջանում ապրող ազգությունների ղեկավարներին և ներկայացուցիչներին, համատեղ հայտարարության առիթով, ուր փաստաթղթի հեղինակները շեշտելով տարածաշրջանի բնիկ ժողովուրդների դեմ կատարվող Ադրբեջանական իշխանությունների ոտնձգություններն ու անմարդկային քաղաքականությունը, Ձեր համերաշխությունը եւ զորակցությունը եք հայտնել Արցախ-Ղարաբաղի հայությանը իրենց ազատության եւ մարդկային իրավունքների համար տարվող պայքարում:

Պե՞տք թալիշ, լեզգի, ուղի, լաթ, ավար, ռուբուլ, ցախուր եւ ..., տարածաշրջանի բնիկ ժողովուրդները, Ձեր կերտած հայրենիքում այսօր միեւնույն հավածանքներին եք ենթարկվում, ինչ տանամյակներ ենթակա էր Արցախ-Ղարաբաղի ժողովուրդը եւ ինչպես արդարորեն նշում եք Ձեր հայտարարությամբ՝ բնիկ ազգերին զրկել են մայրենի լեզվով խոսելուց, երգելուց, իրենց պատմությունը ուսանելուց եւ թույլ չեն տվել պահել ու զարգացնել սեփական մշակույթն ու արվեստը:

Ինչպես Պե՞տք տարածաշրջանի բնիկ եւ փաստորեն Ադրբեջանի բնակչության մեծամասնությունը կազմող ժողովուրդները, նույնպես եւ հայերը Բաքվի իշխանավորների սխտեմատիկ հավածանքների, մշակութային ոչնչացման եւ ծուլման քաղաքականությունը չեզոքացնելու համար ստիպված դիմել են ինքնապաշտպանության, այլապես տարածաշրջանի բնիկ ժողովուրդները դարձրել են կողք կողքի՝ առանց թշնամանքի եւ ատելության:

Հիշենք՝ Փոքրիկ եւ քիչ բնակչությունը Արցախ-Ղարաբաղի ժողովուրդը Ադրբեջանի կողմից պարտադրված անհավասար պատերազմում հաղթական դուրս եկավ, ոչ նրա համար, որ ավելի սպառազինված էր քան ադրբեջանական բանակը, այլ միայն նրա, որ իր պայքարը արդարացի էր՝ նրանք պաշտպանում էին իրենց բազմա-

Ֆրանսիայի Ազգային Ժողովը ընդունել է այոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագիծը

Ֆրանսիայի Ազգային Ժողովն իր դեկտեմբերի 22-ի նիստում, ընդունեց Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագիծը:

Օրինագիծը ներկայացվել է կառավարող «Միություն հանուն ժողովրդական շարժման» (UMP) կուսակցության պատգամավոր Վալերի Բուայեի կողմից: Նրան աջակցել են կառավարող կուսակցության, սոցիալիստական ընդդիմության եւ կենտրոնամետների մեծ մասը: Այժմ օրինագիծը ներկայացվելու է Սենատի քննարկմանը:

Ազգային Ժողովի համեմատողականությունը քննարկումներից հետո ձեւակերպումը փոխարինվել են «օրենսդրությամբ ճանաչված ցեղասպանությունների ժխտման համար պատիժ» ձեւակերպմամբ: Օրենքը, ցեղասպանության փաստը ժխտելու դեպքում, նախատեսում է 1 տարվա ազատազրկում եւ 45 հազար եվրո տուգանք:

Ֆրանսիայի նախագահ Նիկոլա

Եվրոպայի Հայերի Համագումարը լինելով 1915 թվականի թուրքական յաթաղանից՝ Ցեղասպանությունից մնացած ժողովրդի մի մասնիկը, ամբողջովին զգում է հասկանում է Ձեր կրած անեծքայա հավածանքն ու տառապանքը: Ուստի դատապարտում ենք միջազգային հանրությունից, եվրոպական համապատասխան կառույցներից՝ մարդու եւ ժողովուրդների իրավունքները, ճնշված ժողովուրդների պաշտպանության սկզբունքից ելնելով, համապատասխան քայլեր նախաձեռնել՝ ադրբեջանական իշխանությունների կողմից սանձարձակ ճնշումներն ու հավածանքները կանխարգելելու եւ ազգային փոքրամասնությունների իրավունքները հարգելու եւ վերականգնման համար:

Եվրոպայի Հայերի Համագումար Ստոքհոլմ, 19 դեկտեմբերի 2011թ.



Վալերի Բուայե

Մարկոզին հավանության է արժանացրել Ֆրանսիայի Ազգային Ժողովի կողմից ընդունված Հայոց ցեղասպանության հերքումը քրեականացնող օրինագիծը: Թուրքական լրատվամիջոցների հաղորդմամբ՝ այն արդեն ուղարկվել է Սենատի հաստատմանը:

Գրիգոր Ժ. Վրդ. Չիֆթճյանը Ատրպատականի ԸԹ կաթողիկոսական փոխանորդ

Արամ Ա կաթողիկոսի հրամանով Տ. Գրիգոր Ժ. Վրդ. Չիֆթճյանը նշանակվել է Ատրպատականի հայոց թեմի կաթողիկոսական փոխանորդ:



Նորանշանակ փոխանորդ հայր Գրիգորը ծնվել է Բելյուրու 1969 թ., արեղա է ձեռնադրվել 1990-ին: Եղել է Արամ Վեհափառի գավազանակիր, դպրեվանքի ուսուցիչ ու տեսուչ, «Հասկ» ամսագրի խմբագիր, ԱՄՆ-ի Արևմտյան թեմում քրիստոնեական դաստիարակության պատասխանատու, կաթողիկոսարանի Տեղեկատվության բաժանմունքի վարիչ ու նաև «Թռչնոց բույն»-ի հոգևոր տեսուչ: Նա հեղինակել է բարոյագիտական բնույթ ունեցող հատորներ ու հոդվածներ:

Տ. Գրիգոր Ժ. Վրդ. Չիֆթճյանը, հունվարի 3-ին, ժամանել է Թավրիզ և ստանձնել իր նոր պարտականությունը:
Հայր Սուրբին մաղթում ենք ազգանվեր և աստվածահաճո ծառայություն:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ


Ի գիտութիւն Թեհրանի հայոց թեմի հաւատացեալ ժողովրդի գաւակներին յայտնու՛մ ենք, որ համաձայն Թեմական խորհրդի որոշման, որի մասին տարբեր առիթներով, հանդիպումներում եւ մանլոյ ասուլիսներում յայտարարել է, նաեւ կատարած խոստումների համաձայն, ազգային իշխանութեան ազգապատկան կալածների ցանկերը յանձնուած են ազգային առաջնորդարանի թիւ 14 գրասենեակին:

Տանկացողները եւ հետաքրքրողները կարող են ազգային առաջնորդարանի աշխատանքամերին դիմել գրասենեակի պատասխանատուին:

Շաբաթ, 31 Դեկտեմբեր 2011
Թ.Յ.Թ. Թեմական խորհուրդ

Փերիո կրթասիրաց միության Թեհրանի մասնաձյուղի 20-ամյակը

2011թ. դեկտեմբերի 16-ին, Հայ ակումբի սրահում, տեղի ունեցավ Փերիո կրթասիրաց միության Թեհրանի մասնաձյուղի 20-ամյակը, ուր իրենց ներկայությունն էին բերել ԹՀԹ առաջնորդ Տ. Սեպուհ արք. Սարգսյանը, հայ կաթողիկէ համայնքի առաջնորդ Տ. Նշան արք. Գարաբեհեյանը, ԱՅԹ առաջնորդ Տ. Բարգեն եպիս. Չարյանի ներկայացուցիչ և միության երկարամյա անդամ ու վարչական Տ. Խաչատուր քին. Զարգարյանը, Իսլ. խորհրդարանում Թեհրանի և Կոնստանդուպոլիսի իրանահայության պատգամավոր ճրտգ. Գեորգ Վարդանը, Համայնքային կառույցների և միությունների ներկայացուցիչներ, ՓԿՄ-ի Կենտրոնական վարչության նախագահ Հայկ Հայրապետյանը, և հոծ թվով հրավիրյալներ:



ՓԿՄ Հիմնադիր Տ. Հովակիմ քին. Բարսեղյան

Հիշատակելի է Փերիո կրթասիրաց միությունը, հիմնադրվել է 1928թ., Նոր Զուղայում: Իսկ նրա Թեհրանի մասնաձյուղը հիմնը դրվել է 1991թ.: Մանրասնությունը գալիք համարում:

«Թունյան» դպրոցի նախկին շենքի քանդման հարցով՝ Պատգամավորական Ժողովին չի բավարարել Շինարարական մարմնի պատասխանը

2012թ. հունվարի 17-ին և 18-ին, ԹՀԹ առաջնորդարանի դահլիշու՛մ Արբազան Հոր մախագահությանը 14-րդ Պատգամավորական ժողովը կայացրեց իր հերթական 29-րդ և 30-րդ նիստերը:

Նախորդ նիստերի արձանագրությունները ունկնդրելուց, սրբագրելուց և ստացված գրությունները ընթերցելուց հետո Թեմական խորհրդի ատենապետ Էդվարդ Բաբախանյանը ներկայացրեց Դատական, Հաշվեքննիչ և այլ մարմինների անունները առ ի հաստատում պատգամավորների:

Ապա քննարկվեց «Թունյան» նորակառույց դպրոցի և «Սասուն» մանկապարտեզի շինարարական աշխատանքների հետ առնչվող հարցեր:

Պատգամավորական ժողովը զբաղվեց նաև Հասարակական, ՏՃ-տեսական, Կրթական և Կազմակերպչական ենթամարմինների կազմակերպչական ենթամարմինների կազմակերպչական ենթամարմինների ղեկավարների լուծումով:

Ժողովն իր երկրորդ աշխատանքային օրում զբաղվեց «Թունյան» դպրոցի նախկին շենքի քանդման գործընթացում առաջացած խնդիրներով: Պժ Դիվանը տեղեկացրեց, որ ժամանակի Շինարարական մարմնի պատասխանատուին մի քանի անգամ պատասխանատվության է կանչել, բայց այնպես չի բավարարվել նրա կողմից տրված պատասխաններով և հարցը դեռ մնում է չփակված:

Ասանրամար հառաջիկա համաում:

Ոչ ևս է Սեպուհ Ամիրխանյանը


2011թ. նոյեմբերի 13-ին, կյանքից հեռացավ Թեհրանի միակ հայկական հրատարակչատան արտոնատեր Սեպուհ Ամիրխանյանը:

«Սեպուհ Ամիրխանյանը ծնվել էր 1940թ. Իրանի Արաք քաղաքում: Նախնական կրթությունը ստացել է ծննդավայրում, ապա շարունակել Թեհրանում: Մասնակցել է ավարտել է նաև ԹՀԹ առաջնորդարանում կայացող Հայերենագիտական դասարանները: Յոր տարի, որպես ուսուցիչ դասավանդել է հայոց «Թունյան» ազգային դպրոցում:

Երիտասարդ տարիքից զբաղվել է տպագրական գործերով, հիմնականում «Անի» և «Մողեռ» տպարաններում:

1970թ. համագործակցության մեջ է մտել «Նաիրի» գրախանութի և տպարանի հիմնադիր Սամուել Սարուխանյանի հետ և նույն ժամանակ ստանձնել տպարանի տնօրինությունը:

1986թ. «Նաիրի» տպարանը լրիվորեն անցնում է Սեպուհ Ամիրխանյանին: Իսկ 1994թ. Նրա միջոցով հիմնվել է «Նաիրի» հրատարակչությունը, որը ցայժմ ավելի քան 250 անուն գիրք է հրատարակել:



Սեպուհ Ամիրխանյանը նաև հրատարակել է «Նաիրի» պատի (1954թ.-ից) և գրապահ օրացույցները: Նրա քանքերով 2004թ.-ին հրատարակել է իջել «Նաիրի» տարեգրքի առաջին հատորը, որի Բ և Գ հատորները հրատարակվել են 2008 և 2010 թթ.-ին:

Սեպուհ Ամիրխանյանը միշտ էլ հատուկ գուրգուրանքով էր մոտենում հայ գրքին և ներկա էր ամեն տեղ, ուր խօսք էր գնում գրքի մասին... Հողը թեթե լինի վրան...:

Հիշատակենք, որ «Արաքս»-ը նոյեմբերի 14-ին, իր կայքէջում, այս առիթով լրատվություն կատարել է:

12 → ԹՀԹ Թեմական խորհուրդը պատասխանեց մամուլի կողմից արձարծված հարցերին

իրենք առաջնորդարանի կողմից ստացել են ինչ-որ անհրաժեշտ է: Ա. Գևորգ են տեղափոխվել ու ոչ մի արդյունք չի տվել և իրենք շարունակել են փողոցում իրենց կեցությունը և արդեն ամեն ինչ արվել է իրենց համար, նույնիսկ պարսիկ ընտանիքներ են իրենց տարել, ամենավերջում: Բայց էլի վերջինը նա է եղել, որ ստիպված քաղաքապետարանն է հարցին հետևել: Էնենց, որ ամեն ինչ արվել է այդ ուղղությամբ:

Է. Բ.- Տեսեք, եթե մենք տեղեկություն ունենանք, կուսումնասիրենք:

«Արաքս».- Ուրեմն կարելի է զբաղվել այդ հարցով:

Է. Բ.- Անպայման, տեսնենք ինչ է, ինչ չի: Եվ բնականաբար, մեզ պատիվ չի բերի, եթե հային պարսիկը պահի:

Կարինե Դավթյան.- (Առաջնորդարանի Հարաբերական մարմնի ատենապետ), Սրանք Սբ. Գեորգի փախել են ժամանակին, այսինքն արանց տարել են: Սրանք այն երկու կամայք էին, որ Քարին Խանի կամուրջի տակ էին մնում:

«Ալիք».- Մի 4-5 տարվա պատմություն է և առաջնորդարանը հետևել է հարցին, շատ լուրջ:

Է. Բ.- Մայր ու աղջիկ:

«Ալիք» և Կ.Գ.- Այո:

Է. Բ.- Հա հիշում եմ մնան մի բան:

«Արաքս».- Բայց, հարցը միայն այդ երկուսի մասին չէ:

Է. Բ.- Շատ լավ, ասեք, նկատի կունենանք:

«Ալիք».- «Արաքս»-ը ժամանակին չէտարդել է այդ երկուսի վրա:

Է. Բ.- Լավ, խնդիր չի, ասեք, եթե կարողանանք մի բան անենք, վստահ պիտի անենք:

- Այստեղ «Ալիք» օրաթերթի աշխատակից և առաջնորդարանի Հարաբերական մարմնի (ԱՀՄ) ատենապետ Կարինե Դավթյանը անհիմն հայտարարությամբ հանդես գալով, ասաց. «Նրանք նպաստ և կենսաթոշակ են ստանում», որից հետո հարցի մեջ մտավ նույն թերթի տնօրեն և ԹՄ փոխատենապետ Վ. Հովհաննիսյանը:

Վ. Հ.- Չէ, ասում են բացի դրանցից է, հիմա տեսնենք ու՞րք են:

Է. Բ.- Գոնե կաշխատենք իրենց հետ կապ ստեղծել, տեղեկություններ ստանալ, որ եթե հարց են տալիս կարողանանք փոխանցել:

«Արաքս».- Շատ ճիշտ, եթե թույլ տաք անցնեն հաջորդ հարցին:

«Արաքս».- Թեմական խորհուրդն ու պետական պատասխանատու անձինք անգամներ հայտարարել են, որ «Արարատ» մարզականի կալվածի խնդիրը լուծվել է համայնքի օգտին, բայց դեռ լուրեր են պտտվում այն մասին, որ համայնքի բյուջեից վարձավճար է տրվում «Ասթան Դոդա Ռազավի»-ին: Ո՛րք է հասել այդ հարցը:

Է. Բ.- Այս հարցը պիտի «Արարատ»-ից հարցնեք, բայց քանի որ տեղեկություններ ունեն ձեզ կփոխանցեն: Տեսեք, «Ասթան Դոդա Ռազավի»-ն այդ տարածաշրջանի, այսինքն Վանքի, գետինները համարում է «վակֆ» (կրոնական կառույցներին, այս դեպքում իրեն, ընծայված տարածք, ինչք են այլ, Ա. Ա.), և այն որ այդ գետինները տվել են մեզ չի ընդունում, ուրեմն պիտի «փազիրե»-ն (փակամագինը), վճարելիք և հետո էլ օգտվելու համար պիտի վարձ վճարելիք: Այդ «փազիրե»-ն շատ հսկա գումար էր, երկի մեր ունեցվածքից էլ շատ-շատ բարձր, որ դա երկի պատգամավորի, ժամանակի Թեմական խորհրդի, «Արարատ»-ի վարչությունների և կամ համայնքի տարբեր կառույցների ջանքերով, պետությունն ինքն հանձն առավ, որ «փազիրե»-ն վճարի, այսինքն այդ բեռը մեր վրայից վերցնի:

«Արաքս».- «Սուբերյան» և «Նաիրի» ազգային սրահների տնօրինումը ինչո՞ւ է հանձնվել հատուկ միությունների:

Է. Բ.- Երբ խոսեցինք Թեմական խորհրդում, նախքան բացումը կատարելը միությունների ներկայացուցիչներին հրավիրեցինք, երկի նախագահներն էին ներկայացել: Մեր տեսակետը դա էր, որ սրահը երբ որ սարքվում է լինի բոլորին: Ամեն միություն կամ մարմին որ ուզում է աշխատել այդտեղ, իր տարեկան ծրագիրը ներկայացնի և միատեղ մի տարեկան ընդհանուր ծրագիր-ժամանակացույց կազմվի: Իսկ «Սուբերյան» սրահի պատասխանատվությունը հենց «Նաիրի» միությանն է լինելու, բայց տարեկան ժամանակացույցը պիտի պատրաստվի և միություններին էլ թե հասուքաբեր ծրագրերի և թե այլ ծրագրերի համար սրահը պիտի տրամադրվի որ աշխատանք տանեն:

«Արաքս».- Ի՞նչ սկզբունքով է «Սուբերյան» ազգային սրահի տնօրինումը հանձնվել «Նաիրի» միության:

Բայց պետությունն այնքան բարյացակամ էր, որ ինքը «փազիրե»-ն հանձն առավ վճարի Օղաֆին և դրանից հետո Օղաֆն ասաց, որ դուք «Արարատ»-ից օգտվելու համար, որպես փակամագնի տեր, պիտի վարձ վճարեք և 20 տարվա վարձն էլ միանգամից էր ուզում, որը 300 միլիոն թունանի խնդիր էր:

Այստեղ էր, որ երկու տարի առաջ Թեմական խորհուրդը հանձն առավ և այդ 300 միլիոն թունանը վճարեց «Ասթան Դոդա Ռազավի»-ին և 20 տարվա պայմանագիր կնքվեց «Ասթան Դոդա»-ի և Թեմական խորհրդի միջև, որ «Արարատ» մարզականի գետինը մարզամշակութային աշխատանքների համար օգտագործեն: Իհարկե, 20 տարուց հետո էլ ոչինչ չի փոխվում, այդ փակամագինը մերն է և միայն կարող է վարձը մի քանի տոկոսով ավելանա:

Իսկ «Արարատ» կազմակերպությունից էլ պահանջվեց, որ այդ 300 միլիոնը մաս-մաս, տարին 20 միլիոն, վերադարձնի: Ավելի ուշ Թեմականը դժվարությամբ առջև գտնվեց և «Արարատ»-ից պահանջեց, որ ընդհանուր գումարի 30 տոկոսը շտապ վերդարձնի: Իհարկե, այս բոլորը վերաբերում էր «Արարատ» մարզականի կալվածի 50 հազար քառակուսի մետրին: Մնացյալ 20 հազար քառակուսի մետրը ոչ թե դժվարություն ունի, այլ դրա կալվածագրի վերցնելու հետևից են և ոչ մի վտանգ չի սպառնում դրան: Այդ աշխատանքը ընթացքի մեջ է և երկի այդ մասին են ասել, որ վերջացավ: Բայց երկի էլ տեղից օգտվելու իրավունքը վերապահված է մեզ, ճիշտ խանութ մնալ փակամագնի տեր ենք, միթե մենք ուզենանք այդ փակամագինը վաճառենք, որ այն ժամանակ ըստ շուկայի օրենքի պիտի փակամագնի 10 տոկոս վճարենք գետնի տիրոջ՝ «Ասթան Դոդա Ռազավի»-ին:

«Արաքս».- Ի՞նչ ծրագիր ունեք Հաստատում գնված կալվածի համար և ինչպե՞ս պիտի օգտվի մեր համայնքը դրանից և ինչպե՞ս պիտի վերահսկվի:

Է. Բ.- Այդ կալվածը ժամանակին գնվել է, երևանի շրջակայքում, և ներկա Թեմական խորհուրդը որեւէ ծրագիր չունի դրա համար և խնդիրն առկախարել է: Չենք մտածում դրա համար, որովհետև հիմա բացի ծախսերից մենք այստեղ շատ գործեր ունենք անելու:

«Արաքս».- Հիմնականում այդ կալվածի տերն ո՞վ է:

Է. Բ.- Տերը Թեմական խորհուրդն է: Ըստ պետական պաշտոնաթերթի այդ կալվածի տերը օրվա Թեմական խորհուրդն է: Բայց այնտեղի պահելը մի չնչին ծախս ունի տարեկան 450-500 հազար թունան, որ նույն ձևով մենք պիտի պահենք, մինչև մի որոշում կայացվի դրա մասին: Բայց ներկայում որևէ որոշում չկա, որ այդ կալվածը ինչ պիտի լինի, որովհետև չենք կարող մտածել, որ այստեղից դուրս ուզենանք աշխատանք տանել:

«Արաքս».- «Սուբերյան» և «Նաիրի» ազգային սրահների տնօրինումը ինչո՞ւ է հանձնվել հատուկ միությունների:

Է. Բ.- Երբ խոսեցինք Թեմական խորհրդում, նախքան բացումը կատարելը միությունների ներկայացուցիչներին հրավիրեցինք, երկի նախագահներն էին ներկայացել: Մեր տեսակետը դա էր, որ սրահը երբ որ սարքվում է լինի բոլորին: Ամեն միություն կամ մարմին որ ուզում է աշխատել այդտեղ, իր տարեկան ծրագիրը ներկայացնի և միատեղ մի տարեկան ընդհանուր ծրագիր-ժամանակացույց կազմվի: Իսկ «Սուբերյան» սրահի պատասխանատվությունը հենց «Նաիրի» միությանն է լինելու, բայց տարեկան ժամանակացույցը պիտի պատրաստվի և միություններին էլ թե հասուքաբեր ծրագրերի և թե այլ ծրագրերի համար սրահը պիտի տրամադրվի որ աշխատանք տանեն:

«Արաքս».- Ի՞նչ սկզբունքով է «Սուբերյան» ազգային սրահի տնօրինումը հանձնվել «Նաիրի» միության:

Է. Բ.- Այսինքն մի միություն է, որ ժամանակին այդ սրահը փոխանցվել է իրենց, որ աշխատանք տանեն և կենտրոնացվել են այդտեղ: Ժամանակին ազգային առաջնորդարանը ունեցել է վարիչ մարմին, որում եղել է «Սուբերյան» սրահի վարիչ: Այդ մարմինը ընդհանրապես հենց էր դժվարություններն էր լուծում ու մին տար, ու մին չտար և այն ժամանակ էլ դժգոհանքներ կային: Հետո որոշվել է, որ սրահը տրամադրվի «Նաիրի» միության: Հիմա էլ, եթե Թեմական խորհուրդը հանձն է առել, որ 200 միլիոն թունանի չափ օգնի մինչև սրահի սարքելու ընթացքը դա է եղել որ այդ համագործակցությունը, այսինքն սրահից օգտվելու իրավունքը մյուս միություններին պահվի և գործնականում ձև էլ տեսել եք ինչն էր: Բայց մեկ հոգի վերջապես պիտի կարողանա պատասխանատվությունը հանձն առնել: Բայց ավելում ունենք, որ այդ տարեկան ժամանակացույցով ամեն մարդ իրա ծրագիրը տա և ծրագրին հետևեն, վերոհիշյալ համարից մեջ էլ բացի մեկ միություն ունացյալ միությունները ընդառաջեցին որ դա լինի: Հույսով ենք, որ լինի, կհետևենք էլ, որ լինի այդ տարեկան ժամանակացույցը: Եթե նա մեր շրջանին իրականացավ կհետևենք որ դա լինի, որ տեղ ընկնի: Վերջապես, այդ միությունները իրար հետ համագործակցում են, բարեբախտաբար, և հանդուրժողականություն կա, մի թիչ էլ մենք աշխատենք, որ դա շատացնենք:

Վ. Հ.- Նաև «Նաիրի» միությունը 180 միլիոն թունան ներդրում է կատարել, գումարած դրան որոշ ձեռնարկների համար միայն լույսի ծախս են վերցրել և դեռ ձեռնարկներ են եղել որոնց համար գումար էլ չեն ստացել:

«Արաքս».- Ես հարցս լրացնեմ աայսպես. «Նաիրի» ազգային սրահը Սասուն (Չարքեշ) քաղաքամասում է, որը Փերիո կրթասիրաց միությանն է պատկանում և թե այդ միությունը իր հնարավորությունների սահմանափակումների հետևանքով ավելի շատ այդ սրահի կարիք ունի, բայց այնպես «Նաիրի» սրահի տնօրինումն հանձնված է «Սիփան» միության, մինչդեռ վերջինս իր համար, բարոյվ խնդրով, ընդարձակ հնարավորություններ ունի, սա ի՞նչպես է բացատրվում:

Է. Բ.- Թող դիմեն, գուցե տանք: Փերիո կրթասիրաց միությունը ուրիշ դիմում է արել: Նա ուզում է իր տեղը մեծացնել: Թող դիմեն, հետո տեսնենք...

«Արաքս».- Այսինքն հնարավոր է ինչ-որ բան, ինչ-որ տեղ փոխվի:

Է. Բ.- Տեսեք, եթե մենք ասում ենք համագործակցաբար համայնքն օգտվի, աշխատանք տանի, երկի հավատացածն ենք դրան: Եթե դիմեն հնարավորության սահմաններում մյուսից կուզենք, հիմա կայանք, եթե «Սիփան»-ը նոր տեղ ունի, նոր լույսի տակ կնայենք այդ հարցը: Բայց դեռ ոչ չի դիմել: Միայն այդ հանդիպման, որ Փերիո կրթասիրաց միությունից կային ասացին, որ տեղը մեղա: Այսինքն իրենց համար սրահ պահովելու խնդիր կա, որ մինչև զանգ ապահովենք արդեն վստահ չենք սրահ ունենք թե չունենք, աշխատանք տանելու համար:

«Յոյս».- Դուք Չեր նախկին հարցազրույցում, «Յոյս»-ի հետ, ասացիք, որ թեմի Կանոնադրությունը պիտի վերանայվի և ճշտվի տարբեր մարմինների լիազորությունները: Արդյո՞ք այդ կապակցությամբ որևէ աշխատանք տարել եք:

Է. Բ.- Դա մեր աշխատանքը չի, դա Պատգամավորական ժողովն է, որ Կանոնադրություն վերանայելու համար պիտի աշխատանք տանի և կարծում են որ արդեն հանձնախումբ էլ կյանքի կոչել են և աշխատում են այդ ուղղությամբ: Եվ քանի որ Կրոնական խորհրդի հարցով էլ լրացուցիչ կետ ավելացել է Կանոնադրության և հստակացվել է նրա լիազորությունների սահմանը: Այստեղ հարցը նրանում է, որ բոլոր մարմինների պատասխանատվությունների սահմանները պիտի պարզ լինի: Եվ ամեն մարդ իր պատասխանատվությունները պիտի իմանա: Դա ընթացքի մեջ է և հույսով ենք շուտով կվերանայվի:

Ժ. Ամիրխանյան

نخست وزیر الجزایر خطاب به اردوغان:

با خون مردم الجزایر تجارت نکنید



احمد اویحیی نخست وزیر الجزایر

نخست وزیر الجزایر: ما هنوز از یاد نبرده ایم که امپراطوری عثمانی چه بلاهایی بر سرمان آورد، آنان به مدت ۳۱۴ سال کشور ما را اشغال کردند. خون پدران ما را ریختند. به ما ظلم کردند. ترکیه به نحوی در همه جنایاتی که فرانسه در الجزایر مرتکب شده، دست داشته است.

کردند. خون پدران ما را ریختند به ما ظلم کردند و در سال ۱۸۳۰ از ترس نیروهای مهاجم فرانسوی، کشور ما را در عرض سه روز به آنان تسلیم کرده و رفتند. پس دلیلی ندارد که اردوغان در برابر فرانسه و در بحث کشتار ارامنه ما را به عنوان آلت سیاسی مورد سوء استفاده قرار دهد. اویحیی افزود: "نه تنها در دوران عثمانی بلکه در روند استقلال الجزایر نیز ترکیه در سازمان ملل بارها علیه الجزایر اقدامات خصمانه انجام داده است. فرانسه در کشور ما یک و نیم میلیون نفر را کشت. مگر ترکیه و فرانسه در ناتو هم پیمان نیستند، چرا در برابر این تراژدی واکنشی نشان ندادند."

دیدار رییس جمهوری ارمنستان با رئیس اداره مسلمانان قفقاز



سازاده در جریان سفر خود به ایروان به همراه کشیش اوتشاوان معاون اسقف اعظم ارامنه ضمن دیدار با رابین فرهنگی کشورمان از مسجد کبود ایروان بازدید کرد. در این دیدار یاشازاده از شیستان، کتابخانه، کلاس های آموزش زبان فارسی بازدید کرد. "مهران شیراوند" رابین فرهنگی جمهوری اسلامی ایران در ایروان در خصوص تاریخچه مسجد، نوع فعالیت ها، وضعیت بنای مسجد و امکانات آن برای وی و هیات همراه توضیحاتی ارائه داد و سپس نماز را به امامت او اقامه شد. مسجد کبود ایروان بیش از دو قرن قدمت دارد و در حال حاضر بزرگترین و تنها مسجد ارمنستان به شمار می رود. در حال حاضر کتابخانه مسجد کبود ایروان دارای بیش از ۴۵۰۰ نسخه کتاب می باشد که مورد استفاده دانشجویان، توریست ها و اساتید قرار می گیرد.

مجازات منکران نسل کشی ارامنه برابر با قوانین بین المللی است



کمیته مبارزه با تبعیض نژادی وابسته به موسسه حقوق بشر ترکیه از مردم کشورش خواست در برابر انکار نسل کشی ارامنه توسط عثمانی ها با یکدیگر متحد شوند و به اعتراضات خود علیه تصمیم فرانسه خاتمه دهند.

کمیته یاد شده در بیانیه ای از تصویب قانون "مجازات منکران نسل کشی ارمنیان" در پارلمان فرانسه حمایت کرده است. در این بیانیه آمده است: "گویا مردم در نواحی مختلف ترکیه علیه تصویب این قانون متحد شده اند و این در حالی است که مردم باید علیه انکار نسل کشی از سوی دولت ترکیه متحد شوند. مسئولان ترکیه همگی علیه این قانون صحبت کرده اند. آنها ادعا می کنند که منع انکار این نسل کشی از سوی فرانسه نقض آزادی بیان است و معتقدند که ممنوعیت انکار قتل عام ارامنه آزادی بیان را متزلزل خواهد کرد". این کمیته تاکید کرده است که "از نظر ما انکار وقوع یک جرم علیه بشریت هیچ ربطی به آزادی بیان ندارد. نابودی یک ملت با همه ویژگی های آن و رد این جنایت به معنی تایید جرم و موجه دانستن این خونخواست هاست".

هشدار ترکیه به فرانسه

دولت ترکیه هشدار داده است که اگر سنای فرانسه قانون "مجازات منکران نسل کشی ارمنیان" را مورد تصویب رسمی قرار دهد به فعالیت های خود علیه این کشور ادامه خواهد داد. روزنامه "Le Monde" در این باره می نویسد: دولت ترکیه سفیر خود را از پاریس فرا خواند. این اقدام در اعتراض به تصویب لایحه "مجازات منکران نسل کشی ارمنیان" از سوی نمایندگان پارلمان فرانسه انجام گرفت. شورای امنیت ملی ترکیه نیز در این خصوص اعلامیه ای را صادر و درخواست نموده است تا پاریس از "اشتباه بزرگ" خود منصرف شود. در این اعلامیه همچنین تاکید می شود که در صورت تصویب قانون "مجازات منکران نسل کشی ارمنیان" از سوی سنای فرانسه، دولت ترکیه علیه این تصمیم ناعادلانه اعتراض خواهد کرد.

رهبان و سازمان های اجتماعی ملل بومی جمهوری آذربایجان:

جنگ علیه ارامنه قرباغ جنگ ما نیست

خبرگزاری "رگنوم" روسیه خبری مربوط به "درخواست رهبران و برخی از سازمان های اجتماعی ملل بومی جمهوری آذربایجان خطاب به ملل خود" منتشر کرده که در آن نمایندگان سازمان های اجتماعی ملل بومی جمهوری آذربایجان و روشنفکران وابسته به ایشان به صراحت از حقانیت ارامنه در مناقشه قرباغ حمایت کرده از فرزندان مشمول وظیفه ملل خود خواسته اند از حضور در جبهه های این منطقه و خطوط مرزی آن سر باز زنند. متن اطلاعیه بدین شرح است:

"برادران و فرزندان گرانقدر، اینک بیش از ۲۰ سال است که رهبری آذربایجان ملل ما را مجبور می کند که علیه ارامنه آرتساخ-قرباغ بجنگیم. احتمالا این یکی از بزرگ ترین بی عدالتی هاست، که ملل بومی آذربایجان ناخواسته در این جنگ شرکت می جویند. اینک بیش از ۲۰ سال است، که فرزندان ما عمر جوان خود را به مخاطره انداخته و قربانی منافع جمهوری آذربایجان می گردند. آنها یا خود قربانی می شوند و یا فرزندان ارامنه، همسایگان سده های منمادی ما، را می کشند. و تمامی این ها صرفاً برای آن که پایه های حکومت باکو در میهن ما مستحکم تر شود.

هیچ کس در دنیا نمی تواند به ما توضیح دهد، که چرا لزگی ها، تالش ها، آوارها، تساخورها، اودی ها، روتول ها و دیگران باید در کوهستان های ارامنه بجنگند. سردمداران باکو می گویند: که ما باید از وطن در برابر دشمن دفاع کنیم. اما مگر قرباغ میهن ماست؟ و مگر ارامنه دشمنان ما هستند؟

وقتی، بیست سال پیش، جمهوری آذربایجان استقلال خود را از اتحاد جماهیری سوسیالیستی شوروی اعلام کرد، نظر ما، ملل بومی منطقه در این باره را جویا نشد، که آیا ما موافق این تصمیم هستیم یا نه؟ در نتیجه این خودسری، ما به مللی با سرزمین های نیمه شده بدل گشتیم. امروز می خواهند ما، روتول ها، تساخورها، آوارها، لزگی ها و دیگران را مجبور به جنگیدن برای چیز دیگری کنند، تا بدین وسیله مرزهای تقسیم کننده ما به نفع استقرار نهایی رژیم استحالہ گر حاکم مستحکم تر شوند.

همه دنیا می داند، که ساکنان آذری و کرد منطقه قرباغ چگونه طی سال های ۱۹۸۸ تا ۱۹۹۴ بزدلانه از مقابل سربازان ارمنی گریختند. اما هزاران جوان ما سر خود را در قرباغ بر زمین نهادند، آنچه باعث تحکیم حکومت علی اف ها در آذربایجان گردید. و امروز نیز همین علی اف ها هستند که آذری ها و کردهای فراری قرباغ را در سرزمین های ما اسکان می دهند، خانه های ما را از دست ما می گیرند، و هم وطنان ما را از آذربایجان تبعید می کنند. سرزمین های ما، موطن چندین هزار ساله ما، با آذری هایی که از نخجوان و گرجستان می آیند اسکان داده می شود، و در این امر هر قدر هم اعتراف بدان تلخ باشد، گناه بزرگی بر گردن ماست.

جمهوری آذربایجان امکانات عظیمی در اختیار ارتش خود قرار می دهد، و شکی در آن نیست که دیر یا زود این ارتش سرنیزه خود را به طرف ما بر گردانده و رو در روی ملل بومی منطقه خواهد ایستاد. به اعتقاد دولت مجرم باکو، که در پی ترکی سازی میهن ماست، ما حق آموختن زبان مادری و سخن گفتن با آن را نداریم. ما حق ترانه سرایی و تمجید از قهرمانان خود را نداریم. تاریخ ما را از ما می ستانند. زبان ما را از ما می ستانند. فرهنگ ما را از ما می ستانند. وطن ما را از ما می ستانند. و در این عمل منع شده از سوی باری تعالی خواهیم داد.

برادران و فرزندان گرامی، ما و شما باید درک کنیم که امروز با کمک کردن به آذربایجان در جنگ علیه برادران ارمنی خود، شرایطی برای آذربایجان فراهم می کنیم تا فردا به راحتی آزادی خواهی طبیعی ما را سرکوب کند. لازم نیست از رفتار دولت آذربایجان در قبال تصمیم عادلانه خود هراسی به دل راه دهیم. اگر حداقل نیم و یا یک سوم

اعلام همبستگی کنگره ارامنه اروپا

در پاسخ به اطلاعیه رهبران و مسئولین اقلیت های ملی جمهوری آذربایجان



ناگزیر به دفاع از حقوق خود برخاسته اید. پیروزی مردم سرزمین کوچک و کم جمعیت آرتساخ-قرباغ در جنگ نابرابر تحمیل شده از سوی حکام باکو نه به دلیل داشتن تسلیحات بیشتر و پیشرفته تر نسبت به ارتش آذربایجان، بلکه به دلیل کنینت مبارزه آنان بوده است، آنان از سرزمین چند هزار ساله، خانه و خانواده خود دفاع می کردند. بگذار که اطلاعیه شما، چنانکه خود به حق در آن متذکر شده اید، ميثاق زندگی مسالمت امیز ملل قفقاز، و سند محکومیت اعلانهای جنگ افروزانه و غیر مسئولانه هرروزه حاکمان باکو باشد. مطمئن باشید که ارامنه شجاع آرتساخ اعلان های جنگ طلبانه هر روزه حکام آذربایجان را به دیده تمسخر می نگرند، زیرا ایمان دارند که در صورت کوچکترین تجاوزی، دولت باکو بار دیگر شکست سختی را متحمل خواهد شد، شکستی که تمامی قدرتهای مستبد و اشغالگر تاریخ آن را تجربه کرده اند. کنگره ارامنه اروپا به عنوان بخشی از وراثت نجات یافتگان نسل کشی ارمنیان درسال ۱۹۱۵ توسط ترکیه، فشارها و جوری که هر روز بر شمار و می گردد کاملاً درک نموده و ضمن اعلام همبستگی با شما، ظلم و

کنگره ارامنه اروپا استکھلم، ۲۰ دسامبر ۲۰۱۱

مسلیم سعیداوچ ماگومدوف (mogamedov. muslim@inbox.ru)

ماگومد احمداوچ چوپان اف (chupanilav@mail.ru)

خضری جباروچ عمرف (hizzi. omazov@mail.ru)

شامل میکایل اوچ ماگومداف (mogomedor-76@bk.ru)

ماگومداف آتولخان اوچ ماگومداف، رییس انجمن جهانی ملت لزگی (zryh-57@mail.ru)

ماگومد عمراوچ ماگومداف، رییس انجمن افسران لزگی کل روسیه (Lion1947@mail.ru)

انور عنایت اوچ عبدالله اف، رییس انجمن جوانان لزگی کل روسیه (chirvan 8@gmail.com)

فاضل داشلای، نویسنده و سخنور روتول (dachlay@mail.ru)

یاسر کرم زاده، مدیر گروه سردبیری رادیوی تالش ایروان

درباره جرم شمردن انکار نسل‌کشی‌ها

